№ 67 ՀԻՆԳՇԱԲԹԻ, 2 ԱՊՐԻԼԻ 1915 ՀԻՆԳՇԱԲԹԻ, 2 ԱՊՐԻԼԻ № 67

ՔԱՌԱՍՈՒՆՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Соломоновская ул., № 21.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տ ե լ ե ֆ ո ն № 2—53

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարւում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.
Տպարանի տ ե լ ե ֆ ո ն № 67.

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ՆԵՐԿԱՅ 1915 Թ. ՀԱՄԱՐ
(44-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է՝

12 և 11 ամիսը	10 ամիսը	9 ամիսը	8 ամիսը	7 և 6 ամիսը	5 ամիսը	4 ամիսը	3 ամիսը	2 ամիսը
10 ռուբ.	9 ռուբ.	8 ռուբ.	7 ռուբ.	6 ռուբ.	5 ռուբ.	4 ռուբ.	3 ռուբ.	2 ռուբ.

ապրիլի 1-ից մինչև մայիսի 1-ը՝ 85 կոպ.

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 32 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի, Թիւրքիայի բաժանորդները՝ 120 ղրուշ։

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։ Յայտարարութիւնների համար պիտի վճարել՝ առաջին երեսի վրա տողատեղին (պէտիտ) 20 կ., վերջին երեսի վրա 10 կոպէկ։ Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ թէ 40 կոպ. նամականիշ։

Պրեմիաներ «ՄՇԱԿԻ» տարեկան բաժանորդները, որոնք 1915 թ. ընթացքում լրիւ վճարած կլինեն 10 ռ. բաժանորդավճարը կը ստանան որպէս պրեմիա հետեւեալ նոր լոյս տեսնելիք գրքերը. 1) «Տանջվածը»—մեծ վէպ Շահրիարի հայկ. յեղափոխ. կեանքից, 2) «Հայկական հարցը»—լուսաբանված դոկումենտներով։

Մեր հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ» Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ
Բագւի Հայ Դերասանական Ընկերակցութիւնը
Գ. Ի. ԱՄԻՐԱԳՕՎԻ տնօրինութեան ներքոյ
Այսօր, հինգշաբթի, ապրիլի 2-ին
Բենեֆիս Յ. ԶԱՐԻՖԵԱՆԻ
Երրորդ անգամ կը ներկայացնէ անմահ վիպագիր ՐԱՖՖԻԻ
ԽԵՆԹԸ
Դրամա 7 պատկերով, փոխադր. Յովհ. Զարիֆեանի։
I պատկեր. Ալաշկերտում։ Տանուտէր Խաչօյի ընտանիքը։ Քիւրդական ցեղապետ Ֆաթահ-բէկի այցելութիւնը։
II պատկեր. Պրոպագանդա հայ գիւղում։ Գաղտնիքը բացվում է։
III պատկեր. Ինքնապաշտպանութեան հարցը և չարչի յեղափոխականը։ Լրտես հայը աղգաւէքի դիմակի տակ։
IV պատկեր. Յեղափոխականը լրտեսի ճանկերում։ Խուզարկութիւն և թալան։
V պատկեր. Բայազիդի բերդում։
VI պատկեր. Գեներալ Տէր-Ղուկասեանի բանակում։ Հերոսը պարգևատրված։
VII պատկեր. Աւերակներում։ Դաւաճանի զղջումը և նրա մահը։
Անցքը պատահում է 1877 թ. ռուս-թիւրքական պատերազմի ժամանակ։
ՎԱՐԴԱՆԻ (Խենթի) դերը կը կատարէ պ. Յ. ԶԱՐԻՖԵԱՆԸ
ԹՈՄԱՍ ԷՖԷՆԴԻԻ դերը կը կատարէ պ. Վ Ր Ո Յ Ր
Մասնակցում են հարիւր հոգուց աւելի—զօրք, Թիւրք ոստիկաններ, ժողովուրդ, քիւրդեր և ուրիշները։
Մասնակցում է ամբողջ խումբը։ —◆— Տեղերի գները սովորական են։
Սկիզբը երեկոյեան ժամը 8-ին։ ◆ Տնօրէնութեան լիազօր, ռեժիսոր՝ Ա. ԱՐՄԷՆԵԱՆ
Վաղը, ուրբաթ, ապրիլի 3-ին, հրաժեշտի ներկայացում—բենեֆիս տիկ. ԴՈՒՐԻԵԱՆ-ԱՐՄԷՆԵԱՆԻ. կը ներկայացվի Մուրացանի «ՌՈՒԶԱՆ» կամ Հայրենասէր օրիորդ։
առ. 199. 1—1

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ հովանաւորութեան ներքոյ գտնվող
ՀԱՅ ՆՊԱՍՏԱՄԱՏՈՅՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ,
ընդունած լինելով Էջմիածնի համաժողովի որոշումները՝ փախստական-գաղթականներին օգնելու մասին և նրա մշակած գործունէութեան ծրագիրն ամբողջովին, առանց որեւէ վերապահումների, շարունակում է ընդունել նուիրատւութիւններ վերոյիշեալ ծրագիրն իրագործելու նպատակով։
Նուէրները կարելի է ուղղել 1) Ընկերութեան Նախագահին (Тифлисъ, Хану Сагнакскому). 2) Ընկերութեան գանձապահին (Тифлисъ, Юльѣ Спендіаровой—Евангуловская, 8) և 3) «Մշակի» խմբագրութեան անունով (Редакція газеты «МШАКЪ» для передачи «НПАСТАМАТУЙЦУ»).
առ. (օ. մ.) 197. 5—1

ԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ
ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Ռտիշչևսկայա 13, տէլէֆոն 4—21.
Ընդունելութիւն թէ կանացի և թէ ներքին, նոյնպէս և վիրաբուժութեան կարիք ունեցող մնայուն (стаціонаръ) հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից) վաղօրօք գրվելու պայմանով։
Ընդունելութիւն՝ կանացի հիւանդ. ամեն օր՝ ժ. 11—12 առ.:
Հիւանդանոցի բժիշկները
Ա. Ա. Յարութինեան
Ն. Ն. Վեսելովզորով
Վ. Ա. Զակրժեվսկի
Ի. Գ. Կալամկարեան
Ա. Ա. Նովիցկիյ
Գ. Ն. Տէր-Ներսէսեան
Ա. Ր. Փիշէր
Ս. Պ. Շահպարոնեանց
(Հ. Կ.) առ 970. 100—42

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՒՆ
(ԶՈՒԲԱԼՕՎԻ ԱՆՈՒԱՆ)
Այսօր, հինգշաբթի, ապրիլի 2-ին
ՀԱՅԿ. ԴՐԱՄ. ԽՄԲԱԿՑ.
Բարեհաճ մասնակցութեամբ
ՎԱՀՐԱՄ ՓԱՓԱԶԵԱՆԻ
կը ներկայացնէ
Ոճրագործի Ընտանիքը
Դրամա 5 գործ. Ջիակոմէտիի։
Մասնակցում են. օր. օր. Արծւիկ, Վանեցեան, պ. պ. Աղաբաբեան, Բագրատունի, Մարութեան, Սերժ, Վ. Փափազեան։
Սկիզբը երեկ. ճիշդ ժամը 8-ին։
Ռեժիսսեօր՝ ԱՄՕ-ԽԱՐԱԶԵԱՆ
Վարչութեան հերթապահ անդամներ՝
Ա. Նազարէթեան և Յ. Մալխասեան
ԱԶԴ.—Խմբակցութեան ռեժիսեօր ԱՄՕ-ԽԱՐԱԶԵԱՆԻ բենեֆիսի համար պատրաստվում է «ԷԴԻՊ ԱՐՔԱՅ»։
200. 1—1

ԲԺԻՇԿ
Շուշանիկ Նաքաքեան
(Մասնագէտ կանանց հիւանդութիւնների եւ մանկաբարձութեան)։
Ընդունում է հիւանդներին՝ (առ. ժ. 12½—2. (եր. ժ. 4—6.
Հասցէն՝ Սօլօլակ, Ռտիշչևսկայա փ. № 1
Հեռախօս 10—58.
(Ե.Հ.Կ.) առ. 784. 100—84

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Ս. Գ. ԿԵՕՆՃԵԱՆ
պլոմբ, արհեստական ատամներ, ատամի հեռացումը առանց ցաւի։
Ընդունելութիւնը ամենայն օր.
Առաւ. 10—2 ժ.
Երեկ. 4—7 ժ.
Կիրակի օրերը 10—12.
Լերմոնտովսկայա փողոց № 1. մուտքը նրբափողոցից։
առ. (Հ.Կ.) 804. 100—98

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՆԵՐՄՈՒԾՈՒՄԸ ԼԵՀԱՍՏԱՆՈՒՄ

Կառավարչական մի նոր ակտով Լեհաստանը, որ մինչև այսօր զրկված էր քաղաքային ինքնավարութեան այն ձևից, որ մտցված է կայսրութեան միւս մասերում և նոյնիսկ մեզ մօտ, Կովկասում, այժմ ստանում է այդ իրաւունքը, նոյնիսկ աւելի ընդլայնած, լեզուի վերաբերմամբ, քան թոյլ է տալիս 1892 թ. յունիսի 11-ի քաղաքային կանոնադրութիւնը, որով այսօր ղեկավարվում են մեր քաղաքային ինքնավարութիւնները։

Մարտի 17-ին կայացած կայսերական հրովարտակով, 87-րդ յօդուածի կարգով, այսինքն անկախ Պետական Դումայից և Պետական Խորհրդից, հրամայված է մտցնել Լեհաստանի Թագաւորութեան մէջ քաղաքային ինքնավարութիւն։

Դեռ 1913 թ. մինիստրների խորհուրդը մշակեց մի ծրագիր և առաջարկեց Պետական Դումայի քննութեան՝ Լեհաստանում քաղաքային ինքնավարութիւն մտցնելու մասին։ Պետական Դուման մի քանի էական փոփոխութիւններ և յաւելումներ մտցրեց կառավարչական ծրագրի մէջ, մեծ մասամբ այն մտքով, որ տեղական ազգաբնակութեան (լեհ, լատիշ և հրեայ) իրաւունքները աւելի ընդարձակվեցին և թոյլատրվեց լեհական լեզուի գործածութիւնը քաղաքային ինքնավարութեան մէջ։ Սակայն երբ այդ բարեփոխեալ ծրագիրը Պետական Դումայից անցաւ Պետական Խորհուրդը, վերջինս ոչ միայն ջնջեց Դումայի կատարած փոփոխութիւնները և յաւելումները, այլև ջնջեց այն իրաւունքները, որ կառավարչական ծրագիրը տալիս էր քաղաքային կանոնադրութիւնից դուրս, այն է՝ լեհական լեզուի գործածութիւնը քաղաքային դումաների գործավարութեան մէջ։

Այդպիսով կառավարչական և Պետական Դումայի ծրագիրը մնաց անիրագործելի։

Անցեալ 1914 թ. կայսերական հրովարտակով Պետական Խորհրդից մերժված այդ ծրագիրը նորից մտցվեց Պետական Դուման ի քննութիւն, բայց վերջինս, պատերազմի պատճառով, անկարող եղաւ ձեռնարկել նրա քննութեանը։

Այժմ, պետական հիմնական օրէնքների 87-րդ յօդուածի հիման վրա, կայսերական հրովարտակով մտցվում է Լեհաստանի Թագաւորութեան մէջ քաղաքային ինքնավարութեան կանոնադրութիւնը (1892 թ.) բարեփոխեալ ձևով, այն է՝ այն ռէֆորմով, որ լեհական լեզուի գործածութիւնը թոյլատրված է գործավարութեան մէջ։

Կայսերական այս ակտի մէջ ռուսաց մամուլը նկատում է մի նոր շնորհ դէպի լեհական ազգը, որի իրաւունքները ընդլայնվում են տեղական ինքնավարութեան մէջ, իրաւունքներ, որոնցից նա զրկված էր մինչև այսօր, յաւելմամբ մի նոր արտօնութեան, այն է լեհ լեզուի գործածութիւնը գործավարութեան մէջ։

Ահա ինչ է ասում «Новое Время» թերթը այդ առիթով.

«Զատկի օրը—ընդհանուր ուրախութիւն։ Ուրախութիւն մեզ համար և մեր եղբայր-լեհերի համար։ Բարձրագոյն հրամանով բնիկ Ռուսաստանի մէջ գործող քաղաքային կանոնադրութիւնը տարածվում է և Լեհական Թագաւորութեան նահանգների վրա։ Մենք և լեհերը սկսում ենք ապրել ընդհանուր սկզբունքների հիման վրա։ Անդրագոյն ռէֆորմների մասին խօսք կը լինի այն օրը, երբ լիակատար աջողութիւն կը գտնեն մեր ընդհանուր յոյսերը թշնամուն յաղթելու մասին։ Իսկ առայժմ, երբ թնդանօթներն են որոտում, մենք տալիս ենք լեհերին այն, ինչ որ մենք ունենք։ Ինչ տեսակ քաղաքային ինքնավարութիւն ունենք մենք՝ ռուսներս, նոյնը և տալիս ենք նրանց»։

Ռուս թերթը կցում է, թէ լեհերի ցանկութիւնը՝ «ազգայնացնելու» ինքնավարութիւնը Լեհական Թագաւորութեան քաղաքներում՝ պսակվել է կատարեալ աջողութեամբ և լեհերը ստացել են իրաւունք խօսել իրանց տեղական գործերի մասին մայրենի լեզուով։ Դրա մէջ ռուս թերթը գտնում է, որ հասել են Լեհաստանի վերածնութեան օրերը։

Նոր ծրագիրը տնօրինում է, որ լեհերէնի գործածութիւնը կարող է տեղի ունենալ միայն այն տեղերում, ուր ազգաբնակութիւնը զուտ լեհական է կամ ճնշվող մեծամասնութիւնը լեհական է, իսկ այնտեղ, ուր խառն է, պէտք է գործածվի պետական լեզուն։

Անշուշտ, նոր ակտը մի նոր քայլ է դէպի եղբայրական մերձեցումը և բնական հետեւանք է Գլխաւոր Հրամանատարի՝ լեհական ազգին ուղղած կոչին։

Հ. Առաքելեան

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—o—

ՊԱՏԵՐԱԶՄ ԹԻՒՐՔԻԱՅԻ ԴԷՄ

—o—

ՌՈՒՍ-ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
31 մարտի

ԹԻՖԼԻՍ.—Պաշտօնական։ Կովկասեան զօրաբանակի շտաբի կողմից.

Արդուինի ուղղութեամբ մեր զօրքերը առաջանում են։

Թովամերձ և Օլթիի ուղղութեամբ հրացանաձգութիւն է։

Մնացած ուղղութեամբ ռազմական ընդհարումներ չեղան։

ՖՐԱՆՍ-ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
31 մարտի

ՊԱՐԻԶ.—Ծովային մինիստրութիւնը պաշտօնապէս հաղորդում է. «Ֆրանսիական «Սէն-Լուի» զրահանաւը մարտի 30-ին ռմբակոծեց ֆրանսիական հիդրօպլանների ուղեկցութեամբ Թիւրքաց բանակը Գազվի մօտ»։

ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

◆ «Р. В.»-ին հեռագրում են. «Ադրիանուպոլիսը շտապով ամրացնում են. այնտեղ կենտրոնացնում են 25,000 զինուոր։ Կըրք-Քիլիսէում գտնվում են 30,000 զինուոր։ Բաւական խոշոր ույժեր ուղարկվում են դէպի բուլղարական սահմանը»։

◆ «День»-ը գրում է, որ, հեղինակաւոր տեղեկութիւնների համաձայն, Թիւրքաց նաւատորմը շուտով դուրս է գալու Սև ծովը։

◆ Նախկին մեծ վէզիր Հակկը-փաշան մեկնում է Լօզան, որպէսզի Ջաւիդ-փաշայի հետ հող պատրաստէ Ամերիկայում և Իտալիայում՝ սեպարատ հաշտութեան համար։

◆ «Баку»-ի թղթակիցը հեռագրում է, որ յօգուտ հայերի Պետրօգրադում հանգանակված գումարը հասաւ 83 հազար ռուբլու. քաղաքային ինքնավարութեան յատկացրած 50 հազար ռուբլու հետ փողերը փոխադրվում են Էջմիածնի կոմիտէտին։ Հանգանակութիւնը շարունակվում է։

◆ Պրինց Էյտել-Ֆրիդրիխը Սօֆիա այցելելով խնդրել է Ֆէրդինանդին թոյլ տալ, որպէսզի Աւստրիայի ուղարկած ռազմամթերքները փոխադրվեն Թիւրքիա Դունայի հոսանքով, որովհետև հակառակ դէպքում Թիւրքիայի դրութիւնը անտանելի կը լինի։

◆ «Տրիբունան» հաղորդում է, որ Թիւրքաց նաւատորմի քարածուխը կը բաւէ ընդամենը 20 օր։

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—o—

ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՌՈՒՍ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
31 մարտի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Մարտի 29-ին և 30-ին ճակատամարտը Կարպատներում, սկսած Բարտֆէլդից մինչև Ստրիյ, զարգացաւ բաւականին ուժգին։ Մեր զօրքերն առաջացան Օնդաւա գետի երկու ափերով, տիրացան մի քանի բարձրաւանդակի Տելէպօչից դէպի հիւսիս և արևելք և յաղթութիւն տարան Ուժօկի ուղղութեամբ, ուր յամառ կռուից յետոյ Բուկովից-Բենէվ-Վիսօկօնիցա շրջանում գտնվող ռազմադիրքերն անցան մեր ձեռքը. մենք գերի բռնեցինք 2700 զինուոր և 53 օֆիցեր, վերցրինք մի թնդանօթ և մօտ 20 գնդացիր։

Կօզիւվկայի շրջանում թշնամին շեշտակի յարձակում գործեց մեծ ույժերով, բայց նրա բոլոր յարձակումները վանվեցին թշնամու համար խոշոր կորուստներով։

ՖՐԱՆՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԳԼՕ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
31 մարտի

ՊԱՐԻԶ.—Պաշտօնապէս հաղորդվում է, որ Այլյսի անտառում՝ Ֆլիրուայի շրջանում տեղի էին ունենում ուժեղ թնդանօթային կռիւներ։

Գերմանական մի դիրիժաբլ Նանսիում նետեց 7 ռումբ, որոնցից մէկն ընկաւ քաղաքացիական հիւանդանոցի մօտ, իսկ միւսը դպրոցի մօտ։ Ծագած հրդեհներն իսկոյն հանգցրին։

ԱՒՍՏՐՕ-ՍԵՐԲԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
31 մարտի

ՆԻՇ.—Առաւօտեան ժամը 10-ից մինչև կէսօրվայ ժ. 2-ը թշնամին ռմբակոծեց ծանր թնդանօթներից Բէլգրադի մօտի դիրքերը և բերդը՝ մարտկոցների տեղերը յայտնագործելու նպատակով։ Սերբերը չը պատասխանեցին։

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)
31 մարտի

ԼՕՆԴՕՆ.—«Թայմսին» հեռագրում են Վաշինգտոնից. «Հիւսիսային Ամերիկայում սաստկանում է անհանգստութիւնը, ի նկատի ունենալով որ օր-աւուր ուժեղանում է թշնամական վերաբերմունքը դէպի Գերմանիան։ Հասարակական կարծիքը յուզված է, որ գերմանական դեսպանը դիտմամբ վաղաժամ հրատարակեց գերմանական այն նոտան, որով Միացեալ Պետութիւնները մեղադրվում են եռեակ համաձայնութեանը սատարելու մէջ»։

ՍՏՕԿՀՕԼՄ.—Գիտութեանց ճեմարանի նիստում կոմսուհի Լեդօխովսկայան զեկուցում կարդաց Լեհաստանի մասին. համակրական դարձուածքներով նկարագրեց Լեհաստանի տանջանքը ներկայ պատերազմում և մատնանշեց, որ լեհերը բէլգիացիներից աւելի մեծ զրկանքների մէջ են։ Զեկուցմանը ներկայ էին շվէդական պրինց Կարլը և շատ դեսպաններ, որոնց թւում ռուսականը։

ՀՌՈՄ.—Արտաքին գործերի մինիստր Սաննինօն մի ու կէս ժամ զրուցեց Թագաւորի հետ։

ՊԱՐԻԶ.—Հաւասի գործակալութիւնը հաղորդում է. «Հանրապետութեան նախագահը վերադարձաւ Պարիզ գործող բանակին այցելելուց յետոյ։ Նախագահը մեկնեց զինուորական մինիստրի ուղեկցութեամբ չորեքշաբթի երեկոյ և կիրակի առաւօտ նախագահը գտնվում էր հիւսիսում գտնվող զօրքերի մէջ, յետոյ դիմեց Բէլգիա, կանգ առնելով ճանապարհին զօրքերի բանակատեղիներում։ Ապա նախագահը մեկնեց Իպրի Ջրանցքի կողմը, իսկ այնուհետև անցաւ Հիւսիսային ծովի ափով։ Ամենուրեք զօրքերի վիճակը շատ լաւ է ֆիզիքական ու մորալ տեսակէտից. ամեն տեղ զօրքերն ուրախութեամբ ընդունեցին նախագահին և մինիստրին։ Նախագահը և մինիստրն այցելեցին բէլգիական թագաւորին նրա գլխաւոր բանակում, ուր տեղի ունեցաւ երկարատև մտերմական խօսակցութիւն, յետոյ այցելեցին թագուհուն։ Վերադառնալով Ֆրանսիայի սահմանները, նախագահը և մինիստրը անցան՝ երկուշաբթի օրը՝ Դիւնկէրկի վրայով, ուր ազգաբնակութիւնը ցնծագին ովացիա սարքեց»։

Գեներալ Խորհրդի նիստում արտասանած ճառում Վիվիանին ասաց. «Անգլիայի, Ռուսաստանի, Բէլգիայի և Սերբիայի նման, Ֆրանսիան նոյնպէս պատերազմ չէր կամենում, բայց այժմ նա մինչև վերջ կը վարէ այն։ Մենք հաւատացած ենք յաղթութեան մէջ, որովհետև կը լինի արդարութեան յաղթանակ։ Մենք կամենում ենք, որպէսզի Եւրոպան ազատված լինի, որպէսզի Բէլգիան ազատութիւն ստանայ, որպէսզի մենք վերադարձնենք մեր կորցրած նահանգները։ Մենք կամենում ենք ջախջախել պրուսական միլիտարիզմը, վասն զի խաղաղութիւնը չի պարփակվում նրա արիւնահեղ քմահաճոյքների հետ։

ԱԹԷՆՔ.— Սերբիայի և Ցունաստանի կառավարութիւնները մշակում են միացեալ գործողութիւնների մանրամասն ծրագիր, բուլգար հրոսակախմբերի արշաւանքներին դիմադրելու նպատակով։

ՑԱՐՍԿՕԷ ՍԵԼՕ.— Բէլգիական արտակարգ պատուիրակութիւնը գեներալ Դէլվիլի գլխաւորութեամբ ներկայացաւ Թագաւոր Կայսրին։

Նորին Կայսերական Մեծութիւն Թագաւոր Կայսրը այցելեց Պուտիլովի մեքենագործական ու նաւաշինարան գործարանը, մանրամասն դիտելուց յետոյ վերադարձաւ, ողջունվելով ազգաբնակութիւնից և գործարանի բանուորներից։

ԲՈՒԽԱՐԷՍՏ.— Արգելված է արտահանել Թուղթ, գրասենեակի բոլոր տեսակի պիտոյքներ և տպարանական նիւթ։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՑՈՒՐՋԸ

◆ Իպրի շրջանում խոշոր ճակատամարտեր են սկսվել ֆրանսիական և գերմանական զօրքերի միջև։

◆ Կոմս Տիսսան մեկնել է աւստրիական բանակը, տեսնվել է Բուրիանի հետ, ինչպէս ասում են, սեպարատ հաշտութեան հարցի առիթով։

◆ Մոսկվայում կայացած հրէական կազմակերպութիւնների ներկայացուցիչների խորհրդակցութիւնը որոշեց, որ հրէայ փախստականներին օգնելու համար հարկաւոր է տուրք նշանակել ամէն մի հրէայի վրա։ Միայն Մոսկվայում այդ եղանակով մտադրութիւն կայ հանգանակել մի միլիոն րուբլի։

◆ Տեսնելով որ Կարպատներում աւստրիացի զօրքերի վիճակը օրէ-ցօր դառնում է վտանգաւոր, գերմանացիք շտապով զօրքեր են ուղարկում այնտեղ։ Ֆլանդրիայից արդէն մեկնել է մի զօրաբանակ։ Զօրքեր են դիմում նաև Տիրոլից։ Պատերազմական գործողութիւնների ընդհանուր ղեկավարութիւնը Կարպատներում գտնվում է գերմանացի գեներալի ձեռքում, որին հրահանգներ է տալիս Վիլհէլմ կայսրը։

ԼԵՀ ՔԱՀԱՆԱՅԻ ԱՐԻՈՒԹԻՒՆԸ

«Рус. Сл.»-ի Թղթակիցը, նկարագրելով իր ճանապարհորդութիւնը Զամոստէից դէպի Պերեմիշլ, ի միջի այլոց, հետևեալ հետաքրքրական դէպքն է պատմում.

«Զամոստէի քահանաներից (քահանայ) մէկը, հոգեկան հազուագիւտ ուժի և գեղեցկութեան տէր մի մարդ, որ շատ յարգված է քաղաքում, վաղ իմանալով որ աւստրիացիք ռուսահպատակ հազարաւոր ամբոխին տանում են պատժելու՝ գնդակահարելով, շտապում է կոմենդանտի մօտ։

«— Պարոն կոմենդանտ, այժմ կատարվում է մի սարսափելի և չար գործ,—համարձակ և հաստատ ասում է քահանան,—Թիւրիմացաբար այդ բանում մեղաւոր էք դուք և դուք էլ իրաւունք ունէք կանգնեցնելու այն։

«— Բանն ինչո՞ւմն է,—յոնքերը կիտում է կոմենդանտը։

«— Հէնց հիմա գնդակահարում են անմեղ մարդկանց։

«— Գնդակահարում են լրտեսներին, կողոպտիչներին և ընդհանրապէս մեր բանակի թշնամիներին,—ասում է կոմենդանտը.—հայր, թողէք, այդ ձեր գործը չէ։ Պատերազմ է... Այդ անում ենք մենք, իսկ դուք, աւելի լաւ է, գնացէք աղօթեցէք տաճարում...

«— Պատերազմը խաղաղ և անմեղ մարդկանց սպանելու համար չէ,—ընդհատում է քահանան և բացատրում կոմենդանտին մանրութիւնների ատտալը։

«— Դուք երաշխաւո՞ր էք,—ասում է կոմենդանտը աչքերը յառելով քահանայի դէմքին։

«— Իմ կոչումով, մարդկային պատւով և անգամ իմ գլխով,—համոզված ասում է քահանան։

«— Դադարեցնել պատիժը,—նոր հրաման է արձակում կոմենդանտը։

«Գնդակահարութիւնը դադարեցնում են։ 200 մարդ արդէն սպանվել էին, իսկ միւսներին բաց են թողնում իրանց տները։»

ԿԵԱՆՔԸ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ

«Corriere della Sera» հաւաքել է մի շարք հետաքրքրական տեղեկութիւններ գերմանական գլխաւոր կենտրոնների կեանքի մասին։ Գերմանական արդիւնաբերութիւնը այժմ ապրում է ծանր ճգնաժամ։ Եզակի բացառութիւն են կազմում, ընդհանուր կարգից դուրս, արդիւնաբերութեան այն ճիւղերը, որոնք ռազմամթերք են պատրաստում։

Այն գործարաններում, ուր աշխատում են ռազմական պէտքերի համար, տիրում է եռանդուն կենդանութիւն։ Սակայն այդ գործարաններում աշխատող բանուորների մէջ, օրէ-ցօր, աճում է յուզմունք և սարսափ հանդէպ գալիք անյայտ ապագայի, որովհետև նրանք իմացել են, որ յունիս ամսի վերջին թւերում անխուսափելի կերպով սպառելու են այն բոլոր նիւթերը, որոնցից պատրաստվում է ռազմամթերք։

Նախատեսվում է նաև, որ երկրի դրամական շրջանառութիւնը լուրջ կերպով ընկնելու է։

Լուրեր են պտտում, որ Գերմանիայում շուտով զէնքի են կանչվելու 50 տարեկան պահեստիները։ Գերմանական զօրքի մէջ, հէնց գերմանական պաշտօնական ցուցակագրութեան համաձայն, օֆիցէրների խիստ պակասութիւն է զգացվում, որովհետև նրանց մեծ մասը ընկել է արդէն պատերազմում։

Այդ պաշտօնական տեղեկութեան ասելով, գերմանական օֆիցէրութեան ամբողջ թւից սպանվել են 9,925 հոգի, իսկ վիրաւորվել և անհետ կորել 21,351։

ՆԱԽԿԻՆ ՄԻՆԻՍՏՐ ԳԻՒՅՕՆ ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Լօնդօնից հեռագրում են «Dagens Nyheter»-ին, որ ֆրանսիացի տնտեսագէտ և հասարակական աշխատանքների նախկին մինիստր Գիւյօն փետր. 25-ին ճառ է արտասանել Լօնդօնում այն պայմանների մասին, որոնց հիման վրա դաշնակիցները կարող են համաձայնել հաշտութիւն կնքելու դէպքում։

Մէջ բերելով այն բանը, որ Նապոլէոնի հակառակորդները 1815 թւին հրաժարվեցին քննել հաշտութեան պայմանները՝ մինչև Նապոլէոնը չընկաւ նրանց ձեռքի տակ, Գիւյօն գտնում է, որ դաշնակիցները ևս պէտք է վճռականապէս հրաժարվեն ամէն տեսակ բանակցութիւններից Հօհենցօլլերնեան ցեղից որևէ մէկի հետ։ Այդ համդիսանում է միակ և անհրաժեշտ պայմանը հաշտութեան որևէ բանակցութեան հնարաւորութեան։

Հաշտութիւնը պէտք է կնքվի հետևեալ պայմաններով.

Պրուսիան զրկվում է Ռէյնի գաւառներից, նաև Վեստֆալիից, որը դառնում է անկախ պետութիւն։ Ամէնը, ինչ 1815 թ. ունէր Պրուսիան, իրան է տրվում։ Շլեզվիգի և Հօլշտէյնի աննեկսիան չքացվում է, և գաւառները վերադարձվում են Դանիային։ Ֆրանսիան ստանում է Էլզաս-Լօտարինգիան և այն հողը, որ 1815 թւին զրկվեց Պրուսիային։ Սրանից աւելի Ֆրանսիան ոչինչ չը պէտք է պահանջէ Եւրոպայում։ Կիլի նեղուցը յայտարարվում է չէզոք։

Լեհաստանը վերականգնվում է։ Ռուսաստանը ստանում է Ցարգրադը (Կ. Պօլիսը) և նեղուցները։ Գերմանական գաղութները բաժանվում են Անգլիայի, Ֆրանսիայի և Եապոնիայի միջև։

Չէզոք պետութիւնները մասնակցութիւն չը պէտք է ունենան հաշտութեան պայմանների մասին լինելիք բանակցութիւնների մէջ։

ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԻՋՈՑԻՆ

Ֆրանս. հասար. աշխատանքների մինիստր Բիէնվընիւ-Մարտէն վերջերս անկէտա է կատարել տալ պատերազմի ընթացքում աշխատութեան և առևտրի վիճակի մասին։ Անկէտան կատարվել է 31,676 հաստատութիւնների վրա, որոնք նորմալ ժամանակներում պահում էին 1.070,093 գործաւոր և պաշտօնավար։ Օգոստոսի մօբիլիզացիան պատճառ եղաւ, որ փակվեն այս հաստատութիւնների կէսը և գործաւորների $^2/_3$-ը պակասեցին։ Հոկտեմբերին վիճակը մի քիչ լաւ էր. գործարաններ բացվել էին օգոստ. ամսվայ հետ համեմատած 28% աւելի և 35% աւելի գործաւոր էին աշխատում. իսկ յունվարին արդէն 43% էր ներկայանում հաստատութիւնների թիւը։ Իսկ մասնաւորներից 83%՝ համեմատած օգոստոսին։ Բայց անկէտան կատարողները այս թիւը բաւարար չեն գտնում, ասելով որ աշխատանոցները օրական մի քանի ժամ և շաբաթական մի քանի օր բաց են։ Վերջին ժամանակները միայն բաւականին լաւ է, և երբեմն նորմալ ժամանակներից աւելի են աշխատում։ Վերջապէս հետևցնում են, որ աշխատութիւնը 20% միայն պակասել է նորմալ ժամանակի համեմատութեամբ։

Մի քանի զբաղմունքների մէջ շատ աւելի նուազ է այս պակասումը։ Օրինակ՝ սննդաւորման 3%, փոխադրութեան առարկաներ՝ 5%, մետաղներ՝ 7%, կաշեղէն՝ 10%, քիմիական ճարտարարուեստ՝ 14%, հիւսուածք 17%, վաճառականութիւն՝ 19% և այլն։ Բայց դրա փոխարէն՝ ապակեգործութեան, գրքի, հագուստի, շինութիւնների և մանաւանդ նուրբ մետաղների և արժէքաւոր քարերի ճարտարարուեստը 20%-ից զգալիօրէն անցնում է, այնպէս որ միջինը 20% հաշւել յարմար է։ Ըստ անկէտայի՝ յունվարից ի վեր աւելի բարելաւ վիճակ են ներկայացնում աշխատանքները։ Նոր անկէտաներ պէտք է լինեն. ապրիլին երկրորդը պիտի կազմվի 1915 թ. առաջին 3 ամսվայ քննութեան համար։

ԼԵՀԱԿԱՆ ԼԵԶՈՒՆ

«Варшавскій Дневникъ»-ում գրված է.

«Լուսաւորութեան մինիստրի թոյլտուութեամբ ի նկատի կայ մօտ ապագայում մի քանի միջոցներ ձեռք առնել լեհական լեզուն դասաւանդելու հարցի վերաբերմամբ։ Վարշավայի միամեայ այն դասընթացքներում, ուր պատրաստվում են ուսուցիչներ և ուսուցչուհիներ միջնակարգ դպրոցների համար, մտցվելու է լեհական լեզուի և բանահիւսութեան դասաւանդութիւնը։ Այնուհետև մտադրութիւն կայ կազմակերպել դասընթացքներ լեհական լեզուով բժշկութեան և բնապատմական առարկաների վերաբերմամբ, տալով այդ դասընթացքներին ժամանակաւոր բնոյթ, մինչև օրէնսդրական կարգով հարցի քննութիւնը՝ Վարշավայի համալսարանին կից, յիշեալ առարկաներից լեհական լեզուով զուգընթաց դասընթացքներ մտցնելու մասին։

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

(Սեփական թղթակցից)

Բուքրէշ, 3 մարտ

Բալկանի քաղաքական շրջանակները մեծապէս շահագրգռուած են այս միջոցիս Դարդանէլի նեղուցի հարցով։ Եւ իսկապէս՝ եթէ Դարդանէլի հարցը չլուծուի բալկանեան փոքրիկ պետութիւններուն համար նպաստաւոր կերպով, ապա, պետական մարդկանց համոզումով, բալկանեան փոքրիկ պետութիւնները ինքնին կը դադրին քաղաքական և տնտեսական աշխարհին մէջ նոր ձախորդութիւններ ու սլացումներ ընելու հնարաւորութենէն։

Տեղւոյս գերմանասէրներու կուսակցութիւնը գործի վրայ է։ Նախկին ռումէն քաղաքական գործիչներէն ամենանշանաւորն ու ամենահեղինակաւորը, որ վերջերս իր ծերութեան պատճառով քաշուած էր քաղաքական ու վարչական հրապարակէն, պ. Փեթրէ Կարպ, հրապարակ եկաւ և սկսաւ իր պայքարը ո՛չ միայն ռուս քաղաքական ձգտումներուն դէմ, այլ և երրեակ համաձայնութեան։ Հիմնեց «Moldova» օրաթերթը և շարունակաբար կը կրկնէ իր քաղաքական-տնտեսական հեռատեսութիւնները հետևեալ դատողութիւնով։

«Մենք՝ սլաւ ազգերէ շրջապատուած լատինականութեան մէկ պզտիկ ժամադրավայրը կը ներկայացնենք։ Այո, երրեակ համաձայնութեան կը գործակցի լատինականութեան լուսաւոր մայրը՝ Ֆրանսա, բայց ո՛վ ըսաւ, թէ մեր մօր օժանդակելու համար՝ զոհաբերենք մեր 7 միլիոն ժողովրդին։

«Աչքի առջև պէտք է ունենալ հետևեալ շատ այժմէական ու գործնական թէօրին.

«Երրեակ համաձայնութիւնը ստիպուած է իր շահերու փրկութեան համար Կ. Պօլիսը թողուլ Ռուսիոյ, պարզապէս Ռուսիոյ ներկայ կաբինէտին համակրանքն ու վստահութիւնը ռուս ժողովրդին առջև բարձր ու հաշակաւոր պահելու համար։

«Ռուսիոյ դարաւոր երազն էր՝ գրաւել Կ. Պօլիսը և Մարմարայի ափունքներուն վրայ հաստատուելով՝ մի անգամ ընդ միշտ իշխել ու ղեկավարել բալկ. փոքրիկ պետութիւնները։ Փոքր ազգերու ազատագրութեան ուխտով երեւան եկող, արիւն թափող Անգլիան ինչո՞ւ այս պարագան աչքի առջև չունենար. ինչո՞ւ մոլեռանդօրէն գոհացում կուտայ իր բոլոր միջոցներով Ռուսիոյ դարդանէլեան ծրագրին։

«Ռուսական սոյն երազը եթէ իրականանայ, մեզ շրջապատող սլաւ ցեղերու մէջ մենք ո՛ւր, ո՛ր կողմ պիտի հակինք, երբ մեր ուսերուն ճնշող Աւստրիան ալ ինքնին փճացած կըլլայ, կամ պարտութեան դատապարտուած։

Բայց ռումէն ժողովուրդը այս Կարպի հրահանգներու չի կրնար հաւատք ընծայել։ Ոչ թէ Կարպը, եթէ բոլոր քաղաքական գործիչները գերման էմիսարներու օժանդակութիւնով աշխատին, դարձեալ ռումէն ժողովուրդը կը սիրէ Ռուսիան և միայն ի նպաստ իր ազատարարի կուզէ իջնել կռուի դաշտ։

Աւելին կայ։

Կարպի սկսած սոյն պայքարը երրեակ համաձայնութեան շահերուն դէմ՝ ապարդիւն պիտի մնայ, քանի որ զուրկ է լուրջ դատողութենէ և պատմական ճշգրտութենէ։ Ցետոյ՝ պարագայ մը, զոր չէ կարելի աննկատ թողուլ, աս է, որ Կարպէն աւելի հեղինակաւոր ու տաղանդաւոր գործիչներ ի նպաստ երրեակ համաձայնութեան բաց են իրենց խօսքը հրապարակաւ։ Ռումէն ժողովուրդը իր ծոցին մէջ կը սնուցանէ կարևոր չորս քաղաքական կուսակցութիւններ, եթէ չհաշուենք ընկերվարականները։

Ամենէն ծաւալունը այժմ գործի վրայ գտնուող ազատական կուսակցութիւնն է, որ իր հեղինակաւոր ամբողջութիւնով երրեակ համաձայնութեան շատ աւելի բարեկամ է, քան զինակցութեան։

Պահպանողականները երկու հոսանքի բաժնուած են. մին երրեակ համաձայնութեան կողմն է, իր գլուխն ունենալով Ն. Ֆիլիպէսկուն, նախկին պատերազմական մինիստրը։ Երկրորդ հոսանքի ներկայացուցիչներն են Փ. Կարպ և Ա. Մարգիլոման, որոնք, վստահաբար կըսեմ, չունին լայն ժողովրդականութիւն։

Պահպանողական-դեմոկրատները ամբողջ կազմով երրեակ համաձայնութեան հետն են, քանի իրենց շէֆը, ներքին գործոց նախկին մինիստր Թաքէ Եօնէսքօ (Ռուկէ-Բերան), անգլիասէր մըն է, ռուսասէր մը, ֆրանսասէր մը, և ամեն կողմ կը գրէ ու կը վարդապետէ իր ճշմարիտ համոզումները, վայելելով լայն ու անսահման ժողովրդականութիւն։

Կան և ազգայնականները, որոնք այժմ միացած են ու կը համագործակցին դեմոկրատներուն։

Այս իրականութիւնը աչքի առջև ունենալէ ետք, կարելի է հետևցնել թէ Ռումանիա կրնայ լքել երրեակ համաձայնութիւնը։

Եւ չէ որ Ռումանիա մինչև այժմ տուժած է ու կը տուժէ Դարդանէլի նեղուցին Թիւրքաց ձեռքը գտնուելէն, և չէ որ ռուս ժողովուրդը հազար անգամ քաղաքակիրթ է, մարդասէր ու գիտակից, քան Թիւրքը, և չէ որ երէկուան ցեղերու, մանր ազգութիւններու ազատարարը այս հսկայ պայքարէն վերջն ալ պիտի շարունակէ իր աւանդական դիւանագիտութիւնը։

Այդ մասին կասկած չունիմ ես։ Կասկած չունին և գիտակից հասարակական գործիչները ռումէն ժողովուրդի։

⁂

Այսօր տեղս ժամանեց Թիւրքիոյ երեսփ. ժողովի նախագահ Խալիլ բէյ, որ իր պատմական ճառէն վերջ՝ որոշ միսիայով կերթայ Բերլին։

Երկու օր տեղս մնալէ վերջ պիտի մեկնի։ Թէ ինչ միսիայով կերթայ, այս մասին տակաւին որոշ կարծիք մը չէ գոյացած ռումէն քաղաքական շրջանակներուն մէջ. միայն՝ կան գործիչներ, որոնք կը

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԻ ՔԱՆԻ ԷՋԵՐ ՏՈՒՐԻՍՏԻ ՅՈՒՇԱՏԵՏՐԻՑ

I

Տեսակցութիւն Թիւրք պրօֆեսօրի հետ

Դժբաղդաբար ժամանակի սղութիւնն ու Թերթի սուղ էջերը թոյլ չեն տալիս ինձ մի առ մի գրի առնելու Պոլսից ստացած տպաւորութիւնները։ Ուզում եմ, սակայն, ընթերցողների հետ բաժանած լինել գոնէ Պոլսի Թիւրքերի մասին իմ ունեցած մի քանի ծանօթութիւնները։

Պոլսում եղած ժամանակ (սրանից մօտ 8 ամիս առաջ) շատ կարիք էի զգում Թիւրքական կեանքին մօտից ծանօթանալու. Թիւրքերի մասին հայերից ստացած ծանօթութիւնները շատ խառնած էին թւում ինձ, և ես վճռեցի գործ ունենալ հէնց իրանց՝ Թիւրքերի հետ։

Ստամբուլի Թաղամասում «Թիւրք օջախի» (Թիւրքական օջախ) անունով մի մեծ ակումբ կայ։ Այդ ակումբը բազմաթիւ մասնաճիւղեր ունի Թիւրքիայի այլ և այլ վայրերում. և մեծ հովանաւորութիւն է գտնում իթթիհադի, ինչպէս և կառավարութեան կողմից։ Ակումբի նախագահն է մի երիտասարդ ձեռներէց իթթիհադական, ուսմ. համալսարանների պրօֆեսօր Համդուլլահ Սափօ էֆէնդին, որ Կ. Պոլսում յայտնի է նաև իբրև լաւ բանախօս և գրող։ Այդ պարոնի հետ ինձ ծանօթացրեց իր ունկնդիր ուսանողներից մէկը։ Առաջին անգամ Սափօ էֆէնդին մեզ ընդունեց իրանց ակումբի ընթերցարանում. դա մի մեծ և մաքուր սենեակ էր և ունէր իր փոքրիկ գրադարանը։ Մէջտեղի սեղանի վրա էլ շարված էին Թիւրքական և արտասահմանեան լաւագոյն գրական-գեղարուեստական հանդէսները։

Թիւրքական օշարակով մեզ հիւրասիրելուց յետոյ՝ Սափօ էֆէնդին սկսեց սիրալիր կերպով պատասխանել իմ տուած բոլոր հարցերին։

Ամենից առաջ ես ուզեցի իմանալ, թէ ինչ է նրանց ընկերութեան նպատակը։

— Ազգային ոգու բարձրացումը,—պատասխանեց նա.—մեր բոլորի իդէալն էլ պանթիւրքիզմն է. խնդրեմ չը շփոթէք առանձին պանիսլամիզմի հետ, որի համոզված հակառակորդներն ենք մենք։ Մեր խոր համոզմունքով՝ Թիւրք ժողովրդի համար մահմեդական կրօնը թշուառութեան մի աղբիւր է եղել. նա արգելք է հանդիսացել մեր ազգային ոգու զարգացմանը և մեր ինքնաճանաչութեանը։ Մենք այժմ աշխատում ենք, որ Թիւրք հասարակութիւնը մի անգամ ընդ միշտ զանազանել կարողանայ կրօնը և ազգութիւնը. մենք ուզում ենք, որ Թիւրքը իմանայ, թէ արաբն ու քիւրդը օտար են իր համար. ընդհակառակը նա պէտք է սիրէ կովկասեան Թաթարին. չէ որ վերջինս իր արիւնակիցն է, իր ազգակիցը։ Մենք պէտք է շատ սերտ յարաբերութիւն պահպանենք նրանց հետ։ Լենքթիմուրից առաջ մենք ունեցել ենք ազգային վառ ինքնագիտակցութիւն. այժմ պիտի աշխատենք ազգային ընկած ոգին բարձրացնել։

— Ի՞նչ միջոցներ էք ձեռք առել ձեր նպատակին հասնելու համար։

— Շատ յաճախ մենք հանրամատչելի ժողովներ ենք ունենում, ձրի դասախօսութիւններ ենք տալիս, մեր ակումբին կից էժանագին (մուտքը 8 կոպէկ) կինեմատոգրաֆ ունենք, որտեղ միայն Թիւրք արուեստի և պատմութեան յաղթական էջերն են ցուցադրվում, որտեղ Թիւրքը տեսնում է, որ իր նախնիքը ոչ միայն կռւող և մարտող են եղել, այլ և ունեցել են պարծանքի արժանի առաւելութիւններ. մենք Թիւրքերին ասում ենք. «Եղբայր, Թիւրքիան միշտ այսպէս լքված չի եղել. նա ունեցել է յաղթական անցեալ. քո նախնիքը հասել են մինչև Վիէննա և Կովկասի վերին սահմանները. այսօր մեզ դէմ գլուխ բարձրացնողները երէկ մեր ստրուկներն են եղել. մի՞թէ մենք մեր նախնեաց զաւակները չենք. ինչո՞ւ վերջ չենք տալիս այս թմրած վիճակին։ Մեր նախնիքը ոչ միայն քաջ են եղել, այլ և իմաստուն ու գեղարուեստը սիրող։ Գեղարուեստի մէջ Թիւրքերս ունեցել ենք առանձին Թիւրքական ոճ, անկախ արաբականից և պարսկականից»։

Ցետոյ Սափօ էֆէնդին ինձ բացատրեց Թիւրքական ոճի մի քանի առանձնայատուկ կողմերը, որ դիտվում է մզկիթներում, նրանց յատակագծերի և գմբէթների վերաբերեալ. ըստ իս՝ այստեղ դրանց վրա կանգ առնելն անտեղի է։ Ի դէպ ասեմ, որ Սափօ էֆէնդին հէնց Թիւրքական գեղարուեստի պատմութիւնից և էսթետիկայից է դասախօսում համալսարաններում։ Բայց ես նրա ունկնդիրներից լսել եմ, որ նա իր դասախօսութիւնները շատ յաճախ հայրենասիրական ճառերի է վերածում և կապում օրվայ դէպքերի հետ։ Ինչ որ է, անցնենք մեր խնդրին։

— Բացի այդ,—շարունակեց Սափօ էֆէնդին,—ուրեմն ժողովրդին բացի իր անցեալով ոգևորելը, նրան ցոյց ենք տալիս նրա կողքին ապրող հայերին և յոյներին ու ասում ենք. «Տե՛ս, Թիւրք մարդ, երկիրը քոնն է, բայց նրա հարստութիւնը շահագործողը օտարներն են, մեր վաճառականութիւնն ու արհեստները նրանց ձեռքումն են։ Նայիր նրանց անթիւ դպրոցներին, աշխատիր հասնել նրանց»։ Ժողովրդին մենք օգնում ենք նաև կովկասեան Թաթարների օրինակով, շեշտում ենք նրանց աւելի քաղաքակրթված և աւելի բարեկեցիկ լինելը։

Երբեմն Կովկասից մեզ մօտ գալիս են ռուսական կրթութիւն ստացած Թուրք աղջիկներ. նրանք իրանց շատ բաց են պահում, բոլորիս հետ էլ ազատ խօսում են. նրանք շատ հայրենասէր են, այստեղ ոգևորիչ ճառեր և դասախօսութիւններ են կարդում, յատկապէս կանանց համար. մեր կանայք սկզբում նրանց կշտամբում էին, բայց յետոյ սկսեցին սիրել։ Մենք քանիցս նրանց ի պատիւ ճաշկերոյթներ ենք տուել։

Այս ասելով՝ Սափօ էֆէնդին ցոյց տուեց ինձ մի քանի լուսանկարներ, որոնց մէջ Թիւրք ուսանողներն ու նրանց ուսուցիչները շրջապատել էին եւրոպական տարազ հագած մի քանի գեղեցիկ կանանց։

— Ի՞նչ կարծիք ունէք Թիւրքիայի քրիստոնեայ հպատակների մասին,—հարցրի ես։

— Մենք նրանց բոլորի վրա մի աչքով չենք նայում,—ասաց Սափօ էֆէնդին.—մենք գիտենք զանազանել հային յոյնից։ Յոյնին շատ հակառակ ենք. նա ուզում է տիրապետել շուկային, ազգայնացնել առևտուրը. նրա աչքը միշտ ծովի այն կողմն է ուղղված։ Այդպէս չէ սակայն հայը. նրա սիրտը մեր ձեռքին է գտնվում, նրա բաղդը մեր բաղդի հետ է կապված. իրանք՝ հայերն էլ այդ զգում են և ուզում են այս երկիրը ոչ թէ ուրիշի ձեռքում, այլ բարեկարգված տեսնել. մեր ձգտումն էլ հէնց այդ է, ուրեմն հայերը մեր բարեկամներն են *)։

Եթէ մեր ձեռքից գայ, դուրս կը ձգենք յոյներին ամէն մի ասպարէզից. իսկ հայերին վնասելով՝ մեզ վնասած կը լինենք։ Հիմա էլ յոյները ի նշան դժգոհութեան փակ են պահում իրանց դպրոցներն ու եկեղեցիները. Է՛հ, ո՞ւմ ի՞նչ. նրանք դրանով ոչ թէ Թիւրք կառավարութեանը, այլ իրանց Աստուծուն բոյկոտ են յայտարարում։ Երբ այս շինութիւնը, կամ իմ ձեռքի տակ եղած ուրիշ շինութիւններ, մի պակաս են ունենում, ներկելու, յատակելու, պատուհան ձգելու կարիք է զգացվում, ես կանչում եմ ծառայիս և ասում. «Գնա և աշխատիր անպայման Թիւրք արհեստաւոր բերես. իսկ եթէ այդ քեզ չաջողվի, մի հայ բեր, յոյն չը բերես»։ Դէ մի մեղադրէք մեզ, մենք աշխատում ենք, որ մեր ունեցած փողը մի բան գնելիս կամ շինել տալիս Թիւրքերի ձեռքն անցնի։

— Ի՞նչ դիրք է բռնելու Թիւրք կառավարութիւնը դէպի նոր սկսված սերբ-աւստրիական պատերազմը։

— Եթէ այս պատերազմը մի փոքր երկար տևէ, մենք շատ ուրախ կը լինենք. Սերբիայի ձեռքերը կապված կը լինեն, էլ նա չի կարող օգնել Ցունաստանին. մենք կը յարձակվենք յոյների վրա։ Դեռ Սելանիկը մենք չենք մոռացել...

— Ի՞նչ կարծիք ունէք Թիւրքիայի ապագայի վերաբերեալ։

— Ես, ինչպէս և Թիւրք ինտելիգենցիան այդ կէտում երբէք չենք կարող յոռետեսութիւն թոյլ տալ. Մեզ այժմ արդէն յայտնի են մեր ցաւոտ կողմերը. եթէ դրանք բուժենք, Թիւրքիան կամրապնդվի։ Մեր պետութեան, ինչպէս և մեր ազգի գոյութեան ազդակները ես համարում եմ հետևեալները՝ ընտանիք, դպրոցներ, վաճառականութիւն և երկրագործութիւն. ահա դրանց վրա պէտք է դարձնենք մեր ուշադրութիւնը։ Մի բան երբէք չը պէտք է մոռացութեան տալ՝ դա՝ սահմանադրութիւնից առաջ Թիւրքիայի ներկայացրած վիճակն է։ Թիւրքիայի մասին ոչինչ չիմացող մի եւրոպացի եթէ յանկարծ մեր երկիրն ընկնի, տեսնէ մեզ և մեր կանանց այս վիճակում, նա մեզ բար-

---

*) Ես պէտք է ասեմ, որ Սափօ էֆէնդին քանիցս նման ձևով հայերի մասին արտայայտված է նաև Թիւրք պարբերականներում. ժամանակին պօլսահայ թերթերը թարգմանաբար արտատպած են այդ յօդուածները։ Ս. Թ.

կարծեն, թէ Խալիլ բէյ կերթայ բողոքելու Վիլհէլմի, թէ ինչու գերման զինուորականները այս վերջին օրերս կը լքեն իրենց զէնքերն ու կը վերադառնան Բեռլին։ Բայց այս կարծիքն ալ չէ հաստատուած տակաւին։

⁂

Մէկ քանի օրերէ ի վեր կը խօսուէր աւստրօ-իտալական բանակցութեան մը շուրջ։ Իբր թէ Աւստրիա յօժարած ըլլայ խաղաղ միջոցներով համաձայնութեան գալ Իտալիոյ հետ և յանձնել Տիրոլի նահանգը։

Այսօրուան պաշտօնական մամուլը կը հերքէ, աւելցնելով իր կողմէն թէ Սալանդրա պիտի մնայ իր կաբինէտով իտալական ժողովրդի համակրանքն ու քաջալերութիւնը վայելելով։

Բուլղարիոյ նախկին մինիստրներէն դիւանագէտ Կէնադիէվը Հռովմէն տուն ժամանեց։ Երկու օր մնաց իր կնոջ հետ և այսօր մեկնեցաւ։

Պ. Կէնադիէվը «Universal» թերթի թղթակցին հետ իր ունեցած տեսակցութեան մէջ շեշտեց ռուսօ-բուլղարական համաձայնութեան մը, աւելի ճիշդ կըլլայ ըսել՝ մտերմութեան մը պէտքը։

Կէնադիէվ քանի մը օրէն նորէն կուգայ Բուքրէշ, Ռումանիոյ հետ բանակցութիւններ վարելու համար։

⁂

Մէկ երկու շաբաթէն հոս պիտի գայ Աւետիս Ահարոնեան։

Լևոն Շահազիզեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԴԵՊՔԵՐԸ ԻՏԱԼԻԱՅՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

31 մարտի

ՀՌՈՄ.— Երէկ Իտալիայի բոլոր քաղաքներում, հակառակ արգելքի, տեղի ունեցան միջամտութեան կողմնակիցների ցոյցեր, որոնք շատ քաղաքներում ստացան հակապետական բնոյթ։ Ամենուրեք՝ ոստիկանութիւնը չը կարողացաւ արգելք լինել ամբոխների համախմբումներին, որոնք բարձրաձայն պահանջում էին պատերազմ յանուն Տրիէնտի և Տրիէստի ազատագրման։ Աւստրիական և գերմանական հիւպատոսարանների շէնքերը ամեն տեղ թշնամական ցոյցերի առարկայ եղան, չը նայած ուժեղ զինուորական պահակախմբերին։ Հեծեալզօրը և հետիոտն գնդերը ցրում էին ամբոխը. ամեն տեղ լսւում էր «կեցցէ զօրքը» բացագանչութիւնը։ Ամբոխը իր բնում խեղդեց չէզոքութեան կողմնակիցների փորձը՝ հակացոյց անելու։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

31 մարտի

ՍՊԱՀԱՆ.— Բացվեց անգլիական նոր դըպրոց։

Երևացին թռուցիկներ, որոնցով յորդորվում է ծնողներին չուղարկել իրանց երեխաներին այդ դպրոցը։

Բախտիարները նոյնպէս հանդէս են գալիս անգլիացիների դէմ։

ԹԵՀՐԱՆ.— Թիւրքերը, գրաւելով Կասրիշիրինը, շարժվեցին դէպի Քիրմանշահ։ Պարսից կանոնաւոր մանր զօրախմբերը Քիրմանշահից և Սեննէից նահանջում են դէպի Համադան։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետ. Հեռ. Գործ.)

31 մարտի

ՄԻՆՍԿ.— Հրդեհի պատճառած վնասը 200,000 րուբլի է։

ԳՈՄԵԼ.— Գիշերս անսպասելի կերպով Սօժի վարարումից փողոցի ցածր մասերը և բացերը լցվեցին ջրով, որ քշեց տնային իրերը, թռչուն և անասուն. վնասները չափազանց խոշոր են, ջուրն աւելանում է։

ՊԵՏՐՈԳՐԱԴ.— Նահանգական դատարանը դատապարտեց «Рус. Знамя»-ի խմբագիր Դուբրովինին 2 ամսով բանտի՝ Բաթումի քաղաքային վարչութեանը զրպարտելու համար։

ՏՕԿԻՕ.— Եամագուչի նահանգի Ուբէ հանքերում հրդեհի պատճառով զոհվեցին 236 մարդ։

Եապոնիայի պահանջների քննութիւնը Պէկինում աւարտվեց. անլուծելի է մնում Արևելեան Մոնղոլիայի հարցը։

ՊԵՏՐՈԳՐԱԴ.— Հիմնվում է ռուս-ամերիկեան ակումբ։ Օրինականացվեց անգլօ ռուսական մանկավարժական ընկերութիւնը։

ԲՈՒԽԱՐԷՍՏ.— Յայտարարվում է, որ Պրուտ գետի մէջ կան խոլերայի բացիլներ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ

Գէորգ ծառայ Յիսուսի Քրիստոսի եւ անհասանելի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ եւ Կաթուղիկոս Ամենայն Հայոց, ծայրագոյն Պատրիարք Համազգական Նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ սրբոյ կաթուղիկէ Էջմիածնի։

Գերապատիւ առաջնորդաց, բարձրապատիւ փոխանորդաց և հոգևոր հովուաց, արժանապատիւ աւագ-երիցանց և քահանայից, բարեջան խորհրդոց, հոգաբարձութեանց, վարչութեանց և երեսփոխանաց եկեղեցեաց հայոց, բարեգործական և աստուածահաճոյ ընկերութեանց, Թեմական և Թաղական խորհրդոց, միութեանց և յանձնաժողովոց հայոց արանց և կանանց, ժրաջան ուսուցչաց և ուսուցչուհեաց, ազգային գործչաց և բարեգործ անձանց և ամենայն հայ ժողովրդեան, հոգևոր և սիրելի որդւոցս Յիսուսեանց ողջոյն և օրհնութիւն հայրապետական։

Արդէն իսկ քաջայայտ է ամենեցուն դառն կացութիւն և դժուարակիր պայմանք փախստականաց մերոց, որք, զկնի սոսկալի տանջանաց և զրկանաց, հասին ի սահմանս մեր և այժմ յանձնաժողովք և հաստատութիւնք, աստուածահաճոյ ընկերութիւնք և միութիւնք, հասարակական գործիչք և բարեսէր անձինք և մանաւանդ գիւղական ժողովուրդն հայոց օգնեն և օժանդակեն բազմաչարչար զաւակաց Մերոց, ըստ օրինակի ողորմած սամարացւոյն։

Գոհունակութեամբ տեսանեմք յամենայն տեղիս զեռանդագին գործ եղբայրական օգնութեան, որ մխիթարութիւն է սրտի Մերում և պատիւ՝ հայ ժողովրդեան։

Ի նկատ առեալ զօգուտ փախստական-գաղթական զաւակաց Մերոց և ցանկացեալ Մեր կանոնաւորել զգործ օգնութեան ի գիւղօրայս և ի քաղաքս Կովկասու՝ համաչափ բաշխմամբ նպաստից, կազմակերպել յատկապէս զվերադարձ փախստական-գաղթականաց ի Հայաստան և բարւոքել զառողջապահութիւն և զերկրագործութիւն ի բնակավայրս նոցա, Մեք անհրաժեշտ վարկաք հրաւիրել զպատգամաւորս յանձնաժողովոց և միութեանց, ընկերութեանց և հաստատութեանց ի ս. Էջմիածին, ի 1-ն մարտ ամսոյս, վասն խորհրդակցելոյ աստ՝ ընդ հովանաւութեամբ և անմիջական հսկողութեամբ Մերով՝ յաղագս յիշեալ կարևոր խնդրոյ։

Համաժողովն զկնի լսելոյ զմանրամասն զեկուցագիրս և զվիճակագրական տեղեկագիրս ներկայացուցչաց, խորհելով և կազմելով զնախահաշիւս վասն պահպանութեան և վերադարձի փախստական-գաղթականաց և վասն բարելաւման գիւղական տնտեսութեան նոցա, մատոյց Մեզ ի տնօրինութիւն զարձանագրութիւնս և զեզրակացութիւնս իւր։

Ըստ ամենայնի հաճ և հաւան գտեալ ընդ եզրակացութիւնս համաժողովոյն, Մեք հաստատեցաք աստ ի ս. Էջմիածին ընդ հովանաւորութեամբ և հսկողութեամբ Մերով զկենտրոնական մարմին զԳլխաւոր Կարգադիր Յանձնաժողով Եղբայրական Օգնութեան, յանդամակցութիւն որոյ հրաւիրեցաք զչորս ներկայացուցիչս ի Թեմական Կենտրոնական Յանձնաժողովոյ Երևանայ, զերկուս ի Կենտրոնական Յանձնաժողովոյ, ի Կովկասեան Բարեգործական, Նպաստամատոյց, ի Գիւղատնտեսական Ընկերութեանց և ի Յանձնաժողովոյ Հոգևորականաց և Ծխական Հոգաբարձութեանց Թիֆլիսի, զմին ի Յանձնաժողովոյ Հայոց, ի Մարդասիրական Ընկերութենէ և ի Կուլտուրական Միութենէ Հայոց Բագուայ, զմին՝ ի Յանձնաժողովոյ, յԵկեղեցական Հոգաբարձութենէ և ի Բարեգործական Ընկերութենէ Հայոց Նորոյ-Նախիջևանի, զմին՝ ի Յանձնաժողովոյ Մոսկուայի և զմին՝ ի Յանձնաժողովոյ և ի Խորհրդոյ Եկեղեցեաց Հայոց Պետրոգրադի։

Բաց յայսմանէ տուաք իրաւունս անդամոց յանձնաժողովոց և կազմակերպութեանց հայոց ամենայն քաղաքաց, որք գործեն վասն փախստական-գաղթականաց մերոց, ի դէպս ներկայութեան նոցա ի ս. Էջմիածին, մասնակից լինել ի խորհրդակցութիւնս Գլխաւոր Կարգադիր Յանձնաժողովոյս։

Տալով գիտել ձեզ ամենեցուն զհաստատութենէ Գլխաւոր Կարգադիր Յանձնաժողովոյս Եղբայրական Օգնութեան, այսու հայրապետական կոնդակաւս հրաւիրեմք և յորդորեմք զձեզ, որդեակք հոգևորք և սիրելիք, յայսմ պատմական վայրկենի ազգային կենաց մերոց՝ գործել և աշխատ լինել համերաշխութեամբ, բարեգործական ոգւով և ազգասիրական եռանդեամբ յօգուտ փախստական-գաղթականաց մերոց և փութով օգնել Մեզ լիառատ նուիրաբերութեամբք ձերովք, զի ի ձեռն Գլխաւոր Կարգադիր Յանձնաժողովոյ ս. Էջմիածնի, որ ըստ որոշման համաժողովոյ է ղեկավար ազգային մարմին ընդ հովանաւորութեամբ և հսկողութեամբ Մերով, և ի ձեռն ամենայն տեղական յանձնաժողովոց և ընկերութեանց, մարթասցուք ի կատար ածել զհաստատեալս ի Մէնջ զեզրակացութիւնս համաժողովոյն՝ վասն պահպանութեան, վերադարձի գաղթականաց մերոց ի հայրենիս իւրեանց և վասն վերահաստատելոյ անդ զքայքայեալ տնտեսութիւնս և զգիւղօրայս նոցա։

Լիայոյս եմք, զի ամենայն պարտաճանաչ և ջերմակից ազգայինք մեր սրտեռանդն ոգւով օգնեսցեն նիւթապէս և բարոյապէս վասն շինարար և փրկարար գործունէութեանս այսորիկ՝ յօգուտ և ի փրկութիւն փախստական-գաղթականաց մերոց։

Օրհնելով զամենեսեան, մաղթեմք ի Տեառնէ պահպանել զձեզ ընդ հովանեաւ Աջոյ Իւրոյ, փրկել զազգն հայոց ի փորձութեանց և ի թշնամեաց և պարգևել Հայաստան երկրի զխաղաղութիւն և զբարգաւաճումն կատարեալ։

Ողջ լերուք, զօրացեալ շնորհօք ս. Հոգւոյն և յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն։

ԳԷՈՐԳ Ե. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի 21 մարտի 1915 ամի.
ըստ տոմարիս ՌՅԿԴ
ի հայրապետութեան Մերում Դ. ամի
յԱրարատեան Մայր Աթոռ ս. Էջմիածնի.
ի Վաղարշապատ
Թ. 462.

ՑՈՒՑԱԿ

Ալէքսէեվսկի Գարեաչի-Կլիւչի Ուսուցչուհիների

(Տես «Մշակ» № 39)

Ս. Խալաղչեանց, Ե. Շապօշնիկով, Ե. Քոչկանեան և Վ. Լուսիկեան 1-ական ռ., Գ. Դեմերժիևա, Ն. Նուրբէկովա, Ա. Լուսիկեան և Գարեաչի-Կլիւչի պոստային բաժանմունքի նաչալնիկը 50-ական կ., Կ. Գրիգորեան 35 կ., Պ. Քոչկանեան 20 կ.։ Ընդամենը 6 ռ. 55 կ., որից 25 կ. պոստի ծախս։

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎԸ

Երեքշաբթի, մարտի 31-ին, կայացաւ Հայոց Ազգագրական Ընկերութեան տարեկան ընդհանուր ժողովը, որ չէր գումարվել 1912 թ. ի վեր։

Ժողովի նախագահ ընտրվեց պ. Ե. Սպէնդիարեան և քարտուղար՝ պ. Գասնիկեան։

Ընկերութեան եռամեայ գործունէութեան մասին զեկուցումն տուեց վարչութեան քարտուղար՝ որև խմբագրական մասնաժողովի նախագահ՝ Եր. Լալայեան, ինչպէս և նա զեկուցեց ելևմուտքի մասին։ Երևաց, որ ներկայումս Ընկերութիւնը ունի 1700 ռ. դեֆիցիտ։ Այս երեք տարվայ ընթացքում նա հրատարակել է «Ազգագրական Հանդէսի» 2 գիրք, 3 հատոր «Հայ բանահիւսութեան մարգարիտներ» և 2 հատոր «Ղարաբաղի Մելիքութիւններ» գրքերը, որոնց համար առանձին մեկենասներ են եղել (տ. Հ. Մարտիրոսեան և պ. Ա. Վաչեան), ծախսերը հոգացող։ Բացի դրանից Եր. Լալայեանը կատարել է պեղումներ Էջմիածնի շրջանում, որոնց ծախսը հոգացել է մի անձն, տալով 1000 ռ.։

Ընդհանուր ժողովը շնորհակալութեան արժանի գտաւ վարչութեան գործունէութիւնը, ինչպէս և առանձնապէս պ. Եր. Լալայեանի աշխատութիւնները։

Անցնելով ընտրութիւններին, և իմանալով, որ Ընկերութեան նախագահ պ. Ալ. Մէլիք-Ազարեանը, որ 12 տարիներից ի վեր վարում է այդ պաշտօնը, հրաժարվել է, անձնական զբաղմունքի պատճառով, ժողովը ընտրեց նրան միաձայն Ընկերութեան պատուաւոր նախագահ և ապա քուէարկութեամբ ընտրեց վարչութեան անդամներ հետևեալ անձանց, այն է՝ տ. Հ. Մարտիրոսեան, Ե. Սպէնդիարեան, Հ. Մելիքեան, Բ. Տէր-Սարգսեան, Եր. Լալայեան, Մն. Խունունց, Խալաթեան, Գ. Մելիք-Ղարագէօզեան, Ռ. Թադէոսեան և տ. Ալիխանեան։ Խմբագրական մասնաժողովի անդամներ ընտրվեցին Աւ. Եզեկեան, Գ. Լևոնեան, Հ. Ցովակիմեան, Լէօ, Ռ. Մարտիրոսեան և Լ. Մէլիքսէթ-Բէկեան։

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳԻՒՂԻ ՀՈԳԵԿԱՆ ԱՊՐՈՒՄՆԵՐԸ

VI

Ներկայ պատերազմի հիմնայատակ տագնապը գիւղացիութեան մի կողմից անտեսապէս հիւծել է, միւս կողմից բարոյապէս բարձրացրել ու ազնուացրել, փափկասիրտ ու ողորմասէր դարձրել։

Գիւղը զոհաբերում է աւելի՝ քան իր միջոցներն են ներում, զոհաբերում է ամեն օր, ամեն դէպքում. զոհաբերում է պատերազմի բոլոր նպատակների համար անխտիր։

Գեղջուկը շատ անգամ տալիս է, մի կողմ քաշվում և ապա նոր միայն իր հարևանի ականջին կամացուկ փսփսում…

— Հոգուդ մատաղ, մի ասա, հասկացրու ինչի համա են թօփ անում։ Ես կարացի ոչ հարցնել. երեսս չը բռնեց. ամօթ է. տուածները մի զատ էլա չի, որ էդ մարդկանց անտեղի գլխացաւանք տանք։

Հարևանը բացատրում է։

— Ա՜յ հալալ լինի. մօր կաթնի նման հալալ. տուածներս կորած չէ. մեր պարտքն է տալ, մի գլուխ տալ, էս նեղ վախտ ազգին քեօմակ անել. ազգը մեզ շատ ա քեօմակ արել…

Գիւղի նուիրաբերած բարիքներով մեղմվում են հասարակական մեծ-վէրքի ցաւերը. լիանում են տնանկներ, սփոփվում տառապեալներ և սրբվում է անհամար կարօտեալների դառն արտասուքը…

Հանգանակում է հայր-գործական ու ծըխաթէքը, հաշտարարն ու պրիստաւը, տանուտէրն ու քեօխվան, ուսուցիչն ու հոգաբարձուն..

Գիւղը չի մերժում. դժգոհութեան ոչ մի նշան։ Ամենքի դէմքի վրա փայլում է քաղցր ժպիտ, սիրալիր հայեացք և ամենուրեք ցոյց է տրվում սրտաբաց վերաբերմունք։

«Ո՞ւր է տարվում»։ «Ինչու համար»։ Գիւղը նուիրաբերման ժամանակ այս հարցերով չի զբաղվում. միայն թէ նպատակը լինի համակրելի ու ընդհանուր, հանգանակողները ծանօթ ու վստահելի, ժողովրդի սէրն ու յարգանքը վայելող…

Ճիշդ է, նուիրաբերութեան գործում գիւղի ներդաշնակ համերաշխութիւնն երբեմն խանգարում են մամոնայի ստրուկ, ժլատ տիպեր, որոնք իրանց նեղ պատեանում ամփոփված՝ անտարբեր ու անզգայ են դէպի արտաքին աշխարհն և անտեղեակ են հայրենիքի անմիջական պահանջներին։

Նրանց սիրտը քար է, հոգին մեռած, ուղեղն անշարժ։ Նրանք վարժվել են մերժել, դատարկ դարձնել ամենքին. դեռ այդքանը բաւական չէ, ընկնել ծիծաղելի դրութեան մէջ, կեղծել ու ստել… Բայց և այնպէս այդպիսիները չեն ազատվում հասարակութեան արդարամիտ դատաստանից…

Կանգնած ենք մի ցեխապատ տնակի դռան առաջ. ներսից ամուր փակված է։ Երկար ու ուժգին թակում ենք։ Լսվում է մի խուլ քչփչոց. մէկն ոտաթաթերի ծայրերով մօտենում է դռան։

— Ա՜յ, տունդ քանդվի՛, ոնց է փակել. չի՞ էլ խըռում,—ասում է բարկացած Կարօ-Ջիզին.—հենց նոր էր կանգնած պատի ղրաղին. մեզ տեհաւ թէ չէ՝ իրան պոկեց. Թո՛ռ, գետի՛նը մտնիս… Նիկա՛լ… Թըխ… Թըխ…

բարոս կը համարի. իսկ նախկին Թիւրքիային ծանօթ մէկը մեր այսօրվայ կեանքի և իդէալների մէջ մխիթարական շատ բան կը գտնի։ Չը պէտք է յուսահատվել՝ միշտ «մենք ինչ ենք» ասելով, այլ միշտ պիտի հարց տալ, թէ ի՛նչ թափով առաջ ենք գընում։ Վերցնենք հէնց մեր Թիւրք ընտանիքը. առաջ կինը շատ աւելի փակված էր, քան այժմ. բացի իր առօրեայ հոգսերից հիմա նա նոր խնդիրներ էլ ունի. հայրենասիրական ջիղը զարգանում է նրա մէջ, զգում է իր վիճակի աննախանձելիութիւնը։ Ճիշդ է, նա դեռ արտաքուստ պահում է իր քօղն ու չարշաւը, բայց ներքուստ աշխատում է կրթել իրան։ Սահմանադրութիւնից յետոյ միմիայն կանանց համար 600 դասախօսութիւններ և ժողովներ են կազմակերպվել։ Պակաս չեն եղել նաև կին դասախօսները։ Մեր ընկերութիւնը արտասահմանում ինչպէս ուսանողներ (մօտ 25 հոգի), այնպէս և մի քանի ուսանողուհիներ է պահում։ Միայն՝ կին արտիստներ չենք կարող ունենալ առ այժմ։ Սահմանադրութիւնից առաջ աղջկանց մի խղճալի վարժարան կար միայն, այժմ մէկի փոխարէն մի քանիսն ունենք։ Ունենք նաև կանանց մի վարժապետանոց։ Տելեֆոնի կայարանում, մի քանի կանանց վաճառատներում և նոյն իսկ պօստի գրասենեակում սկսել են Թիւրք կանայք երևալ։ Մեր կանայք ունեն իրանց առանձին թերթերը, որ իրանք են խմբագրում, իրանք էլ աշխատակցում են։ Դրանցից մէկն է «Կադընլար դիւնեասը» (տիկինների աշխարհը), կան նաև ուրիշ 3—4 թերթեր ևս։ Եւ վերջապէս մենք ունենք կանանց կօօպերատիվ ընկերութիւն և կար ու ձևի 4 արհեստանոցներ։ Թիւրք կնոջ հետ մենք մանկավարժի նման ենք վարվում։ Նրան վերագրում ենք այնպիսի լաւ յատկութիւններ, որ նա չունի։ Այդպիսով մենք նրա մէջ առաջ գնալու տրամադրութիւն ենք ստեղծում։ Մենք ասում ենք նրան. «Դու միայն հարեմի զարդ չես. առաջ Թիւրք կինը այդպէս փակված չէ եղել. նա ընտրող է եղել և նոյն իսկ ընտրվող»։ Յիշեցնում ենք նրան Թեմրիս խանումին, որ երբեմն Կովկասում կայսրուհի է եղել և պարսից Քէյխուսրէ Թագաւորին բռնել-գլխատել է տուել։ Մեր դպրոցներն էլ այժմ մեզ մեծ յոյսեր են ներշնչում. մեր ամբողջ ուսանող երիտասարդ սերունդը կրթվում է պետական ոգով. մենք մեծ տեղ ենք տալիս մեր ազգային պատմութեանը։ Երիտասարդ սերնդի իդէալը վրէժ լուծելն ու նախկին Թիւրքիան վերականգնելն է. «Ռումէլին տուողը կառավարութիւնն էր, այլ ոչ թէ Թիւրք ժողովուրդը,—տաքացած ասում են նրանք,—մի յարմար րոպէ, և մենք դուրս պիտի գանք մեր արդար իրաւունքը պաշտպանելու»։ Իսկապէս այսպիսի մի նոր սերունդ ունենալուց յետոյ չենք կարող էլ յուսահատ լինել։ Մեր դպրոցներում մենք այժմ մեծ տեղ ենք տալիս զինուորական մարզանքներին, լեռնային ճանապարհորդութիւններին, զինավարժութեան, ֆուտբոլի և այլ խաղերի։ Չը մոռանամ ասել, որ մեր դպրոցներն աշխատում ենք բաց թողնել անխտիր Թիւրքիայի բոլոր ազգութիւնների առաջ։ Բացի դրանից կարող ենք ասել այժմ, որ հայի և յոյնի կողքին գոյութիւն ունի նաև Թիւրք վաճառականութիւն։ Մի փաստ միայն յիշեմ. սահմանադրութիւնից յետոյ միայն Պօլսում 540 խանութ և վաճառատուն են բաց արել Թիւրքերը։ Հիմա բանկերից էլ այնքան չեն վախենում. փողային օպերացիաներ ունենում են նրանց հետ։ Երկրագործների համար էլ պետութիւնը արտասահմանից գործիքներ է բերում և էժան վաճառում է նրանց։ Երկրագործական բանկեր նոյնպէս ունենք քիչ թէ շատ։

— Հապա օտար պետութեանց Թիւրքիայում ունեցած կապիտուլյացիաները ձեր կարծիքով պետական ույժի համար վնասակար տարրեր չե՞ն։

— Ի՞նչպէս չէ, վնասակար տարրերից առաջինն։ Կարծում էք՝ ես այդ կէտը անտե՞ս եմ առնում։ Ոչ։ Բայց առայժմ մենք անզօր ենք դրա դէմ կռւելու։ Ի՞նչ ասեմ. ամենից առաջ մենք փող չունենք. օտար կապիտալիստին եթէ չը դիմենք և շնորհումներ տալով նրանից պարտքով փող չը վերցնենք, մենք չենք կարող ապրել, մենք չենք ունենալ այն լաւ կազմակերպված բանակը, որով այսօր իրաւամբ պարծենալ կարող ենք։ Եթէ օտար պետութիւնների ունեցած իրաւունքները կրճատենք, ո՞վ գիտէ ինչե՛ր կը գան մեր գլխին։ Կառավարութիւնը քնած չէ. յարմար առիթ եթէ լինի, նա կաշխատի չէզոքացնել այդ խոչընդոտները։

Սրանցից բացի՝ Սաֆօ էֆէնդիի հետ մենք խօսել ենք նաև արդի Թիւրքերէն լեզուի և գրականութեան մասին։ Իրանց ապրած շրջանը նա «վերածնութեան շըրջան» է անուանում։ Թերթերի և գրքերի լեզուն օրէ-օր աւելի ու աւելի պարզվում և հանրամատչելի է դառնում. արաբական, որոշ չափի և պարսկական դարձուածքները տեղի են տալիս խօսակցական լեզուին. Նոր գրողները աշխատում են համանիշ բառերի կուտակումից խուսափել։ Արաբական տառերի փոխարէն լատինական տառեր գործածելուն հակառակ է Սաֆօ էֆէնդին, բայց նա գրուատում է Էնվէր-փաշայի՝ բանակում և զինուորական շրջաններում մտցրած այբուբենը (շատ տառեր մի բառի մէջ ոչ թէ առաջվայ նման կցվում են իրար, այլ գրվում են ջոկ-ջոկ. մէկ էլ՝ գրվում են շեշտեր, որոնցից կարելի է իմանալ, թէ վանկի ձայնաւորը ինչպէս պիտի արտասանուի)։

Գրելու այս նոր ձևը, որը առաջին անգամ հրապարակի վրա դրել են Իսմայիլ Հակկը, Ջելալ և Եսադ բէյերը, շատ կը նպաստէ ժողովրդի մէջ գրագիտութեան տարածվելուն։

Սաֆօ էֆէնդիի ասելով՝ Թիւրք գրականութիւնը այժմ ամբողջովին ազգայնական է. Թիւրք գրողները, լինեն նրանք բանաստեղծ, վիպասան թէ դրամատուրգ (հանրածանօթ դէմքերից՝ Մահմէդ Էմին, Համիդ-բէյ, Քէմալ-բէյ, Հալի Զիյա, Հիւսէյին Այրի, Թէվֆիկ Հալիթ, Եակուբ Կադրի, Էօմէր Սէյֆէդդին և այլն), գեղարուեստագէտ լինելուց առաջ նացիոնալիստ հրապարակախօսներ են. հերոսները բեմից կամ գրքի էջերից քարոզներ են կարդում կամ ծաղրում են համիդեան ռէժիմը, մեդրեսէների (հոգևոր դպրոց) նեխած կարգերն ու այնտեղ ապրող փաթթոցաւորներին։ Ինչպէս Իթթիհադը, այնպէս և մի քանի Թիւրք գրողներ ազգին անգնահատելի ծառայութիւն մատուցին՝ կըրքոտ կերպով կռւելով ընտանիքներում տարածված մի շարք նախապաշարմունքների և սնոտիապաշտութիւնների դէմ։

Սաֆօ էֆէնդիի կարծիքը՝ Թիւրքական կեանքի այլևայլ կողմերի մասին առարկայօրէն մէջ բերելուց յետոյ, չեմ կարող մի քանի խօսք չասել այն վերաբերմունքի մասին, որը ցոյց է տալիս Կ. Պօլսի հայութիւնը և յատկապէս նրա մտաւորականութիւնը։

Տարածված կարծիք է հայերի մէջ, որ Թիւրքերը առ հասարակ անընդունակ են առաջ գնալու, մի գործ տեսնելու. դժբաղդաբար այս սխալ կարծիքը վարակել է նաև մտաւորականներին։ Թիւրքերին նրանք չեն ուզում երբէք բարձր տեսնել։

Որ Սաֆօ էֆէնդիի ակնարկած շարժումը, թէկուզ այդքան վառ գոյներով, գոյութիւն ունի Թիւրքական կեանքում, դա փաստ է. բայց որ այդ շարժման մէջ մխիթարական և յուսատու ոչինչ չի գտնում պոլսահայ մտաւորականութիւնը — խօսքս քչերի մասին չէ—այդ էլ անժխտելի է։ Ծաղրում են նրանք Թիւրքերի ամեն մի առաջադիմական քայլի վերաբերմամբ. Թիւրք երիտասարդութեան առաջ գնալու ցանկութիւնը նրանք համարում են երեխայական ոգևորութիւն, որ շատ շուտով կը հանգչի։

Կառավարութիւնը բաւականին դրամ էր յատկացրել, որ բոյսկաուտի խմբեր կազմվէին դպրոցականներից և արձակուրդին ուղարկվէին լեռնոտ վայրերը, որպէսզի այնտեղ մի ամիս ապրէին, մասնագէտ մարմնամարզի հսկողութեան տակ մարզանքներ կատարէին, զինավարժութիւն անէին և խաղեր խաղային։ Ինչպէս լսեցի, ոչ մի հայ աշակերտ կամ ուսանող չէր մտել այդ խմբերի մէջ, թէև հէնց Թիւրք միջնակարգ և բարձրագոյն դպրոցներում հայերի թիւը մեծ է։

Թիւրք թերթերը նիւթապէս շատ աւելի ապահով են և բովանդակութեամբ աւելի հարուստ, քան պոլսահայ թերթերը (օր. «Թանինը», «Թէրջիմանը», «Թաֆսիրը Էֆքեարը», «Սաբահը», «Իկդամը»)։ Բայց հայերից ովքե՞ր են կարդում և հետևում Թիւրք թերթերին, քանի հոգի են ծանօթ նրանց պատկերազարդ հանդէսներին և գրականութեանը։ Իսկ Պօլսի հայ մտաւորականութեան մեծագոյն տոկոսը գիտէ այնքան Թիւրքերէն, որ մի բան կարդայ և իր կարդացածը հասկանալ կարողանայ։ Աւելացրէք դրա վրա նաև այն, որ Թիւրք պարբերականների լեզուն շատ մօտ է խօսակցականին, հետևապէս և դիւրամատչելի։

Ս. Ոսկերչեան

(Կը շարունակուի)

Թըխ... Նիկալ... Թըխ... Թըխ... Թըխ... Թըխ...

Դուռը կամացուկ բացվում է։ Դուրս է նայում մի փոքրիկ Թխադէմ աղջիկ...

— Ա~մը...մ...ին ա~սը ըս~եց... տա...նը չը...չ...եմ... Մա...մա...սը...ս էլ տա...նը... չէ՞...

— Տեհա՞ք,—դառնում է մեզ հպարտութեամբ Կարօ-Ջիզլին,—խօսքս դզվե՞ց։ Ա՜յ օջախդ դզվի, տունդ բրիշակ, ունեցածդ շան ու գէլի փայ։ Աղքատ ու անճար չը կարծէ՞ք։ Հազարներով նաղդ փող ունի. սրա բարաթները մի խրձի չափ։ Բան չը կայ. գնանք. հալբաթ մի օր նրա ուղտը մեր դռանը կը չոքի։

Հեռանում ենք «ժլատ ապետի» տան մօտից։ Մի ուրիշ լիասիրտ ու առատաձեռն գեղջուկի անկեղծ վարմունքը մոռացնել է տալիս նախորդ ծանր տպաւորութիւնը։

Անցնում են ժամեր։ Ողջ գիւղն ոտնատակ ենք տուել. հասել ենք ձորի ծայրի վերջին խրճիթին... Ժողովարարութիւնը վերջացած է. արդիւնքը խոշոր. բոլորս էլ յոգնած ենք ու սոված։ Ուզում ենք ցրվել...

Դիմացի փողոցի ծայրից հասնում է մեզ հեւալով ու շնչակտուր մի պատանի՝ ձեռքն ամուր սեղմած։ Մօտեցնում է Կարօ-Ջիզլուն. նրան բան է պատմում. ապա բանալով ձեռքը տալիս է նրան մի քանի փայլուն դրամներ և նոյնպէս արագ քայլերով վերադառնում...

— Կը կակղե՜ս~կուտես,—ծիծաղելով ասում է Կարօ-Ջիզլին.—Նոր խաբար... աչքներս լոյս... Նիկալը մի բուռը փող ա ղրկել... գեռ հլա մի բոլ «ներողութիւն» էլ հետը... Մեր հեռանալուց յետոյ մեռածի ամբարմունքը հասել ա հարեւանների ականջին... Գեղցիք մօտ են եկել «բազար»... Կանչել են Նիկալիս ու մի «քաղաքավարի» անպատւել, խելքի են բերել... Նա իր արածից փոշմանել ա. էն տղին Թաքուն վաղեցրել ա կուշտս, որ ձեզ համողեմ, էս փողը վեր առնէք... Ա՜յ խէրդ կտրվի, Նիկալ... վա՜յ գլուխդ մեռնի, Նիկալ... հա... հա... հա... հա...

Репортеръ

Մեծ-Ղարաքիլիսա

ԱՆՑԱԾ ԴԷՄՔԵՐ

Ռուս կին գրող Ե. Ն. Վօդօվօզօվա հետաքրքրական յիշողութիւններ է զետեղել «Голосъ Минувшаго» Թերթում կոմս Դելեանովի մասին։

Տիկնոջ որդին լինում է աքսորանքում, որտեղից գրում է, թէ ինքը ցանկանում է քննութիւն բռնել դիպլոմ ստանալու և այդ մասին խնդրում է մօրը միջնորդութիւններ անել հարկաւոր տեղերում։

Տիկ. Վօդօվօզօվային ասում են, որ անհետանք կը մնան այդ միջնորդութիւնները, անյուսալի են և այլն։

— Աքսորանքից... քննութիւն բռնել։ Ի՞նչ էք ասում. այդ թրտեղ է տեսնված. այդպիսի օրինակ ամենևին չէ եղած...

Սակայն տիկ. Վօդօվօզօվան փորձ է անում։

Արխանգելի նահանգապետը իր աջակցութիւնն է խոստանում տիկնոջը, թէ հարց եղած դէպքում լաւ կը խօսի ուսանող Վօդօվօզովի մասին։

Ուսումնական դեպարտամենտի դիրեկտոր Պ. Ն. Դուրնօվօն, թէթև դժուարութիւններից յետոյ, նոյնպէս կակղում է։

Վերջում մնում է շահել լուսաւորութեան մինիստր Դելեանովի կամքը, որի վրա խիստ վատ յոյսեր են լինում։ Ծանօթները բացատրում են տիկնոջը, որ խնդիրները մինիստրին զեկուցում են երկու պաշտօնեայ՝ Անիչկով և Եգեան։

— Եթէ,—ասել են,—զեկուցի Անիչկովը, աւելորդ է, իսկ եթէ զեկուցի Եգեանը, կարելի է փորձել. բայց բանը նրանումն է, որ միշտ զեկուցում է Անիչկովը։

— Բայց կարելի է սպասել, երբ նա պաշտօնով կը գնայ որևէ տեղ կամ, վերջապէս, հիւանդանայ...

Եթէ ուրիշ մէկը լինէր, կարող էր Թևաթափ լինել այս պարագաներում, սակայն տիկ. Վօդօվօզօվային այս անգամ ուղղակի աջողվում է։

Այդ ժամանակ Պետրօգրադում տարածված էր «հարբուխ» հիւանդութիւնը, որը ձգում էր մայրաքաղաքի բոլոր բնակիչներին։ Ուրիշների Թւում հիւանդանում է և Անիչկով։

Վօդօվօզօվան, այդ իմանալով, գնում է մինիստրի ընդունարանը։ Մի շարք անախորժ ձևականութիւններից յետոյ, տիկնոջը յայտնում են, որ «Նորին պայծառափայլութիւն լուսաւորութեան մինիստրը իր մօտ է հրաւիրում տիկ. Վօդօվօզօվային»։

Տիկնոջը սիրով ընդունում և նստեցնում միջահասակ մի ծերունի՝ ինքնատիպ, կարմրաւուն գլխով։

— Ես ճանաչում էի ձեր հանգուցեալ ամուսնուն. յաճախ զրոյցներ ենք ունեցել նրա հետ...

Խօսակցութիւնը հետզհետէ հարթվում է դէպի գործը։

— Ասացէք, խնդրեմ,—հարցնում է մինիստրը,—դուք ձեր ամուսնու մահից յետոյ ստանում էք Թօշակ։

— Ոչ, ձերդ պայծառափայլութիւն։ Բայց Թօշակ խնդրել չեմ ուզում ձեզանից։

— Տարօրինակ է։ Հանգուցեալ Վասիլի Իվանովիչի ծառայութիւններն ի նկատի ունենալով, դուք համարձակ կարող էք Թօշակ պահանջել և ես իմ պարտականութիւնը կը համարէի...

— Ամբողջ հոգով շնորհակալ եմ, ձերդ պայծառափայլութիւն, ես դրա համար չեմ եկել ձեզ խնդրելու։

— Ի՞նչպէս, դուք հրաժարվո՞ւմ էք Թօշակից։ Կը նշանակի դուք լաւ միջոցներ ունէք։

— Բացարձակապէս ո՛չ մի։

— Տարօրինակ է, շատ տարօրինակ։ Երբէք առիթ չի եղել, որ մէկը հրաժարվի Թօշակից... Բայց այդ դէպքում ինչո՞վ կարող եմ օգտակար լինել։

Տիկ. Վօդօվօզօվան պարզում է իր խնդիրը, բայց կոմս Դելեանովը ձեռքերը Թափահարում է։

— Երբ ձեզ առաջարկում են Թօշակ, դուք հրաժարվում էք և դրա փոխարէն անհնարինն էք խնդրում։ Որպէս մինիստր, ես պէտք է երիտասարդ սերունդը պահպանեմ ապականիչ ազդեցութիւնից։ Ես չեմ կարող Թոյլ տալ, որ ձեր որդին վերադառնայ և պրօպագանդա մղի։

Մինիստրը այդ Թեմայի մասին խօսում է երկար։ Յետոյ նա խօսքը շուռ է տալի յեղափոխականների մասին, տիկնոջ ամուսնու, ուսուցիչների, գիմնազիստների և ընդհանրապէս երիտասարդութեան այլասերման մասին։

Խօսակցութիւնը ձգձգվում է մի ամբողջ ժամ, պտտվում մի ինչ-որ գիմնազիստի շուրջը, որը կրօնի դասի ժամանակ պարել է նստած տեղը։

Սակայն գլխաւորի մասին, աքսորված ուսանողին քննութեան Թոյլտւութիւն տալու մասին, մինիստրը լսել անգամ չի ուզում։

Ցուցված, բեկված սրտով հեռանում է խեղճ մայրը մինիստրի մօտից։

— Ի՞նչ անել. ուր գնալ։

Մինիստրի մօտից դուրս գալու ժամանակ նրան խորհուրդ են տալիս խնդիր տալ, որովհետև զեկուցանելու է Եգեանը։

— Քանի որ մինիստրը,—մտածում է խեղճ մայրը,—խօսակցութեան ժամանակ մերժեց, խնդիրը ի՞նչ կարող է անել։

Բայց պատահում է այնպէս, որ խնդիրը օգնում է։

Եգեանը շատ լաւ է իմացել իր պետի Թուլութիւնները։ Նա իմացել է, որ կոմս Դելեանովը ոչ միայն «կարդում է բոլոր գրքերը», այլև նա աւելի սիրել է կրկնել, որ ինքը, կոմս Դելեանովը, քար չի գցում Ռուսաստանի լուսաւորութեան առաջ։ Հէնց այդ լարի վրա էլ խաղում է Եգեանը։

— Ես անձնական ոչ մի ծանօթութիւն չունեմ Վօդօվօզովայի և նրա որդու հետ,—ասում է իր զեկուցման մէջ նա,—բայց նա գրում է պատանիների համար, նրա գրքերը խիստ տարածված են, իսկ նա ինքը գրական նշանաւոր շրջանի մէջ, և մերժման դէպքում այդ բոլոր գրողները կը սկսեն ամենուրեք բղաւել և տարածել միանգամայն անճիշդ համբաւ ձեր պայծառափայլութեան մասին, կը սկսեն ապացուցել, որ ձերդ պայծառափայլութիւնը քար է ձգում լուսաւորութեան առաջ։

— Օ՜, Աստուած հեռու տանի։ Ձեզ արդէն յայտնի է, որ ես ամեն կերպ աշխատում եմ տարածել այն։

— Հէնց այդպէս, ձերդ պայծառափայլութիւն, ծուռ մեկնութիւններից խուսափելու համար...

Եւ պատահում է այն, որ երբէք չի պատահել առաջ. ուսանող Վօդօվօզովը գալիս է Արխանգելսկից և քննութիւն բռնում։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Փոխարքան լիազօրել է փոխարքայի խորհրդի անդամ՝ գաղտնի խորհրդական Վ. Ն. Օսովեցկիին վերաքննութիւն կատարել Գանձակի նահանգական և գաւառական հաստատութիւններում։ Օսովեցկին մեկնում է այսօր. նրա հետ որպէս օգնական գնում է Կ. Ա. Իւզբաշեան։

◆ Թիֆլիսի առաջնորդը հայոց Կենտրոնական Կոմիտէտի գործերով մեկնեց Սանահին։

◆ Իշխանուհի Ե. Մ. Էրիստովա, ծնեալ Թամամշեան, ի յիշատակ իր հանգուցեալ ամուսին Ն. Ր. Էրիստովի նուիրաբերել է 500 ր. Վրաց Դրամատիկական Ընկ.՝ վրաց բեմական գործիչների I համագումարի արձանագրութիւնները հրատարակելու. 3000 ր. վրաց Թատրոնի շինութեան համար և 10,000 ր. Վրաց մէջ Գրագիտութիւն Տարածող Ընկերութեան։ Վերջին գումարի տոկոսները, 500 ր. չափ, իշխանուհին նշանակում է, որ յատկացվի վրացերէն լեզուով եղած լաւագոյն գրուածքին որպէս պրեմիա։ Պրեմիան հաստատվելու է 1917 Թւից։ Այդ նոյն 10,000 ր.-ուց իշխանուհին 2000 ր. նշանակում է իր հանգուցեալ ամուսնու կամքի համաձայն, բանաստեղծ Ն. Բարաթաշվիլիի երկերի հրատարակութեան համար, սրա մահվան 100-ամեակի առիթով, որ լրանում է 1916 թ. Նոյեմբերի 22-ին։ Այդ հրատարակութիւնից ստացված գումարը իշխանուհին վերադարձնելու է Գրագիտութիւն Տարածող Ընկ. Ն. Ր. և Ե. Մ. Էրիստովների անունով ֆոնդ հիմնելու համար։

◆ Վերջերս մասնաճառները սկսել են օրինազանցութիւններ անել և խախտել սահմանված սակագինը։ Հէնց այդ պատճառով շուկայի վերատեսուչ Խարազեան 7 արձանագրութիւն է կազմել, մի ուրիշը՝ 2։

◆ Թիֆլիսի ոստիկանապետը ներկայումս պատրաստում է մի զեկուցում այն մասին, թէ ինչու ապրուստը Թանգացել է քաղաքում։ Ոստիկանապետը հարցը քննում է վարչական-ոստիկանական տեսակէտից։ Զեկուցումը կուտարվի մօտ օրերս։

◆ Ապրիլի 10-ին լոյս կը տեսնի հայերէն-ռուսերէն մի լրագիր «Նոր Օր» անունով և 20,000 օրինակով, որի զուտ արդիւնքը յատկացվելու է պատերազմից վնասված լեհերի օգտին։

◆ Ալ. Խատիսեանի անունով Խարարովսկից յօգուտ փախստականների ղ-ր Ֆատալովից ստացվել է 670 րուբլի։

◆ Ուրբաթ, ապրիլի 3-ին, կը կայանայ «Կարմիր ձուի» հանգանակութեան յանձնաժողովի նիստը։

◆ Ոստիկանապետը բարեգործական նպատակներով կազմակերպված բոլոր հանգանակութիւնների համար հաշիւ է պահանջել Բագ. Կենտրոնական Կոմիտէտից։

◆ Այգեգործական դպրոցում սկսել են գարնանային գործնական աշխատանքները։ Երկրագործական դեպարտամենտի կարգադրութեան համաձայն, դպրոցում քննութիւններ լինելու են միայն բարձր դասարանում և աշակերտները արձակվելու են մայիսին։

◆ Պրոֆեսոր Բեսէ Վաշինգտոնից դիմել է Թիֆլիսի բուսաբանական այգու վերատեսչին, խնդրելով ուղարկել իրան կովկասեան պտղատու ծառերի սերմեր։

ՌՈՒՍԱՍՏԱՆ

◆ Մոսկվայում հրատարակվող «Մարտ» Թերթը հաղորդում է, որ հայ ուսանողների մի խմբակ ձեռնարկել է մի ժողովածու կազմելու՝ ռուսերէն լեզուով։ Ժողովածուի համար Թարգմանված են մի շարք վէպիկներ և ոտանաւորներ հայ գրողներից։ Ժողովածուն պիտի լինի պատկերազարդ և պիտի հրատարակվի հայ գաղթականների օգտին։

◆ Լվովում և Գալիցիայի մի քանի քաղաքներում աշխատող (զեմստվային և այլ կազմակերպութիւնների մէջ) կովկասցիները, գլխաւորապէս հայ ուսանողները, մտադիր են միանալ և ստեղծել մի կազմակերպութիւն «Կովկասեան խումբ» կամ «Կովկասեան քաղաքների միութեան խումբ Գալիցիայում» անունով։

ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

◆ Այսօր, հինգշաբթի, մարտի 2-ին կը կայանայ մեր շնորհալի դերասան Ց. Զարիֆեանի բենեֆիսը. կը ներկայացվի մեր անմահ վիպագիր Րաֆֆիի «Խենթը», որտեղ բենեֆիցիանտը կը կատարէ Վարդանի (Խենթի) դերը։ Ցանկալի էր, որ հասարակութիւնը իր ներկայութեամբ խրախուսէր ու գնահատէր պ. Ց. Զարիֆեանին, որն ունի որոշ արժանաւորութիւններ բեմական ասպարէզում։

◆ Մենք հաղորդել էինք, որ դերասան Վահրամ Փափազեանը ռուսաց խմբի հետ կատարելու է Արծուիկի դերը համանուն պիէսում։ Այժմ հաստատապէս հաղորդում են, որ «Արծուիկ» պիէսի փոխարէն ներկայացվելու է «Օտէլլօ» ողբերգութիւնը, որում Օտէլլօյի դերը կը կատարէ Վահրամ Փափազեանը հայերէն։ Ներկայացումը նշանակված է ապրիլի 9-ին։

◆ Այսօր նշանակված է դերասան Բէլեաէվի բենեֆիսը Արտիստական Ընկ. Թատրոնում։ Բարատովի դրամ. խումբը կը խաղայ երկրորդ անգամ Դոստոևսկիի վէպից դրամայի վերածած «Униженные и оскорбленные»։

◆ Մարտի 31-ին նոյն խումբը կրկնեց «Սաֆօն», որի մէջ մասնակցում էին տ. Ժիխարեվան և պ. Պէտիպան։ Թատրոնը լիքն էր։

◆ Ապրիլի 4-ին Արտիստական Ընկ. դահլիճում կը կայանայ դաշնակահար օր. Մարգարիտ Միրիմանեանի համերգը, որի ծրագիրը կազմված է Բէթհովէնի, Շուբերտի, Շօպէնի, Լիստի, Գատովսկիի, Գլազունովի և այլոց գրուածքներից։ Տաղանդաւոր դաշնակահարի անունը անշուշտ կը գրաւէ լուրջ երաժշտութեան գնահատողների մեծ Թիւ։ Ամենուրեք Միրիմանեանի համերգներն անցել են մեծ աջողութեամբ։

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Թիֆլիսի ժամերով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է՝

№ 3	դէպի Բաթում	1 ժ. 45 ր.	ցերեկ.
№ 4	» Բագու	7 ժ. 3 ր.	երեկ.
№ 6	(արագ) »	12 ժ. 8 ր.	ցերեկ.
№ 9	» Բաթում	8 ժ. 53 ր.	երեկ.
	» Ջուլֆա	10 ժ. 23 ր.	երեկ.
	» Բօրժօմ	3 ժ. 20 ր.	ցերեկ.

ԺԱՄԱՆՈՒՄ Է ԹԻՖԼԻՍ՝

№ 3	Բագուից —	12 ժ. 54 ր.	ցերեկ.
№ 4	Բաթումից —	5 ժ. 55 ր.	երեկ.
№ 5	Բագուից (արագ)	7 ժ. 41 ր.	երեկ.
№ 10	Բաթումից —	9 ժ. 51 ր.	առաւ.
	Ջուլֆայից —	6 ժ. 53 ր.	առաւ.
	Բօրժօմից —	7 ժ. 25 ր.	առաւ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀՕՆՕՐՐԷԱ

ունենալու դէպքում, Թէ սուր և Թէ խրօնիկական բնաւորութեան, նոյնպէս և նրա հետևանքների ժամանակ պէտք է ընդունել

„ԱՐՄԱՏԻՆ“

դեղը։ «Արմատինը» միանգամայն անվնասակար է օրգանիզմի համար և աջողութեամբ կարող են գործածել Թէ տղամարդիկ և Թէ կանայք։ «Արմատինը» գործածելու ժամանակ չէ պահանջվում ոչ մի սրսկումն, լուացումն, խարումն, խողովակի լայնացումն և այլն։ Կատարելապէս բուժվելու համար պէտք է գործածել 6 արկղիկ։

«Արմատինի» 1 արկղիկը արժէ 1 ր. 75 կ.։
Վաճառվում է դեղատներում եւ դեղավաճառանոցներում։
Կեղծիքներից խուսափելու համար՝ պահանջեցէք միայն Ա. Եա. Ակուլեանցի «Արմատինը», սազածաղկի էտիկէտով։
(հ. կ.) 174. 0—3

ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ
Ա. ՎԱՂԵԱՆՑԻ ծախքով լոյս ընծայեց
Նիւթեր հայ մելիքութեան մասին
Բ. պրակ՝
ԴՕՓԵԱՆՔ և ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՔ
Գրեց Կարապետ եպիսկոպոս ◆—◆ Գինն է 50 կոպէկ։
«Նիւթերի» Ա. պրակ՝ Դիզակի Մելիքութիւնը Առաքել վարդապետի արժէ 30 կոպ.
Դիմել՝ Въ Армянское Этнографическое О-во. Тифлисъ.
(կ. հ.) 173. 6—4

ՏԵԽՆԻՔԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ
ԻՆԺԵՆԵՐ
Տ. Ա. ԲՈՒԴԱՂԵԱՆԻ
Բագու, Կրասնովօդսկայա փ. տ. Աւան-Իւզբաշեանցի։ Հեռախօս № № 23-49, 23-50

Առաջարկում է ամբողջ Կովկասի և Պարսկաստանի համար իսկապէս ԴԻԶԵԼ շարժիչներ (մոտորներ) յայտնի ԿՕԼՕՄԵՆՍԿԻ ընկ. մեքենայագործարանից։

Հօրիզօնական անգլիական շարժիչներ, (մոտորներ) «ԿՐՕՍԼԼԷՅ» ընկերութեան մեքենայագործարանից «Դիւրացրած Դիզել» սիստեմի, որ գործ է ածվում նաւթի բոլոր տեսակներով. նաւթի ծախսն է մի ժամում ամեն մի ույժին $^{1}/_{2}$ ֆունտ կամ 200 գրամ։

Գազային շարժիչներ, որոնք բանում են Թէ բնական և Թէ գեներատորային գազով։

Ջրհան և ջրմուղ մեքենաներ (նասօսներ)։

Ջրի շարժիչներ (տուրբինաներ)։

Սառոյց պատրաստող մեքենաներ «Ֆէնիքս» ընկ. գործարանից։

Ամեն տեսակ էլեքտրական մեքենաներ և պլատոյքներ յայտնի «Դինամօ» ընկ. գործարանից։

Երկրագործական մեքենաներ՝ լոկոմոբիլներ, ցորեն մաքրող մեքենաներ, տրակտորներ և այլն՝ յայտնի ամենայն ամերիկական «ԿԷՅՍ» (Case) ընկեր. գործարանից։

Մեծ ճանապարհի վրա աշխատելու համար ԱՒՏՕՄՈԲԻԼՆԵՐ նոյն ամերիկական «ԿԷՅՍ» (Case) ընկերութեան գործարանից։

Վերոյիշեալ տեխնիքական գրասենեակը իր վրա է վերցնում զանազան գործարաններ սարքել և գործի գցել իր միջոցներով՝ ինժեներներով և վարպետներով։

Դիմել՝ Баку. Техническая Контора Т. А. БУДАГЯНЦЪ.
Արտասահմանից՝ Bacou (Russie) Bureau Technique T. A. Boudaguian, Ingénieur
(հ.կ.) 351. 0—84.

ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ նկարը եւ ՀԱՅԱՍՏԱՆԻ քարտէզ

բազմագոյն և գեղարուեստօրէն կազմված հազուագիւտ հրատարակութիւն, տպված արտասահմանում՝ Պրագայում, Uniev ֆիրմայում, բրիստոլեան Թանգարժէք ստուարաթղթի վրա, որ գործադրվում է այցետոմսերի համար։ Ի նկատի առած ներկայ քաղաքական դէպքերը, Թէ վերոյիշեալ նկարը և Թէ քարտէզը կարող են ծառայել Թէ որպէս տնային զարդարանք և Թէ որպէս դասական ձեռնարկ դպրոցականների համար։ «Մայր Հայաստան» նկարը կարող է ծառայել նաև ձեռագործների, նկարուհիների և լեպկաների ընդօրինակման համար։ Նկարի և քարտէզի գինն է, ճանապարհածախսով և վերագիր վճարով—2 ր. 35 կ.։ Նկարն առանձին—1 ր. 50 կ., իսկ քարտէզը—30 կոպ., ճանապարհածախսը՝ պօստային սակագնով։

Պահանջներն ու դրամը հասցէագրել՝ Типографія «Культура». Тифлисъ, Михайловскій пр. 102—6. Հեռագրի հասցէն՝ Культура. Тифлисъ. Տէլէֆօն № 17—27.
(օ. մ.) 151. 10—8

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ ԵՒ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
Գ. ՏԷՐ-ՌՈՒԲԻՆԵԱՆԻ
Հայաստանի տնտեսական հեռանկարները
ԳՐՔՈՅԿԸ։
Գինն է 20 կոպէկ։

Յիշեալ գրքոյկը ցանկացողները Թող դիմեն «Մշակի» խմբագրութեանը, կանխապէս ուղարկելով գրքոյկի արժէքը և ճանապարհածախսի համար էլ 14 կ.։
(օ. մ.) 198. 5—1

„ԱՐՇԱԼՈՅՍԻ ՁԱՅՆԵՐ“
Նոր ազգային երգարան
Հայրենասիրական ոտանաւորներով երկրորդ բարեփոխված տպագրութեամբ՝ ԱՆԴՐԱՆԻԿԻ և բոլոր խմբապետների և իրանց բանակների նկարներով։
Գինն է 40 կոպէկ։
Դիմել՝ Тифлисъ, Эриванская пл. Писчебумажный магазинъ. К. Г. АРЗУМАНЯНЦУ.
Նոյնպէս և բոլոր գրավաճառներին։
Գումարով գնողներին լինում է զեղչ։
(հ. ու. կ.) 141. 10—8

„Մշակի“ խմբագրատանը վաճառվում են
հետեւեալ վիպական երկերը.
1) ՋՀՈՒԴ ՔՈՒՇԱՆ՝ վէպ Պարսկաստանի կեանքից, Շահրիարի . 1 ր. —
2) ԻՆՆՍՈՒՆ ԵՐԵՔԸ, մեծ վէպ Վ. Հիւգօյի, Թարգմ. Ա. Սաֆարեանի . . . . 1 ր. 50 կ.
3) ՈՒՐԱՆԻԱ, աստղագիտ. վէպ. Կ. Ֆլամարիօնի, Թարգմ. Հ. Առաքելեանի . . . . 1 ր. 50 կ.
4) ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԸ, վէպ Հանրի Բորդօյի, Թարգ. Հ. Առաքելեանի — 60 կ.
5) ՏԱՍՆ ԵՒ ԵՐԿՈՒ ՊԱՏՄՈՒԱԾՔ, Շահրիարի . . . . — 50 կ.
6) ՀԱՅՐԵՆԱՋՈՒՐԿ, Ե. Սպիրիի, Թարգ. Իս. Յարութիւնեանի . — 50 կ.
7) ՔՍԱՆ ՎԷՊԻԿՆԵՐ, Գի դը Մոպասանի, Թարգ. Հ. Առաքելեանի 1 ր. —
8) ՍԱՒԱՌՆՈՂ ՈԳԻՆ վէպ. Ց. Սոլովեանի . . . . — 40 կ.

Նրանք, որոնք յիշեալ գրքերից մի-մի օրինակ կը պահանջեն մեզանից փողը կանխիկ վճարելով, կը ստանան 25% զեղչ և ճանապարհածախսը մեզ վրայ։ Վերադիր վճարով պահանջողներին կը լինի միայն 15%։

Հասցէն՝ Ред. газ. «Мшакъ», Тифлисъ.
(5) 0—5

Типографія Канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лоирсъ-Меликовская улица, домъ казенный.